Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատունը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis Rédaction „Ardzagang“.

# ԱՐՁԱԳԱՆՔ

АРДЗАГ... Rédaction de la Revue ... Mechitaristengasse 146

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐՁԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ
Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ. Редакція "Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis. Rédaction du journal armènien „Ardzagang“
Յայտարարութիւններ ընդունվում՝ են հայերէն եւ օտար լեզուներով։

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ
Հարկաւոր է անյապաղ ուսումնասիրել։
Քննիչ Կոմմիսիան։
Նորթհէմպթընի մեծ միտինգը։
Ռէֆորմների ծրագիրը։
Մի հանդիսաւոր նախաճաշ։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Կ. Պոլսից։ Գ. Կիպրոսը Հայաստան չի գնալ։ Մոսկվայից։ Գ. Դիլօնի մեկնման յետաձգումն։ Փարիս աւանից։ Հարկահանութեան նոր սիստեմ։ Կայսերական Թոյլտուութիւն։ Թիֆլ. քաղ. առողջապահական խորհրդի անդամակցիրը։ Երևանից։ Աղէքսանդրապոլից։ Բաթումից։ Երևանի պ. նահանգապետի Թիֆլիզ գալը։ Ներսիսեան դպրոցի տեսչի պաշտօնակատարի հրաժարումը։ Ղալմուղ ազգաբնակութեան նուազումն։ Նամակ Շամախուց։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Նամակ Մուշից՝ Նուրեր։
ՓԵԼԻԵՏՕՆ.—Հայերին բնաջինջ անելու քաղաքականութիւն։
ՔԱՂԱՔԱԳԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՋԱՆԱՁԱՆ.—Իտալիոյ Թագուհին Մխիթարեանց վանքում։
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

### ՀԱՐԿԱՒՈՐ Է ԱՆՅԱՊԱՂ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼ

Եւրոպական երեք պետութիւնները վերջապէս մի վճռական քայլ արին և առանց սպասելու Քննիչ Յանձնաժողովի վերադառնալուն, առաջարկեցին Բ. Դրան ռէֆորմների ծրագիրը։ Ինչպէս «Արձագանքի» անցեալ համարում յայտնեցինք, մենք ամենևին չենք կարող այդ ծրագիրը վերջնական և կատարեալ համարել, որովհետև նա չէ ազատում տաճկաբնակ հայերին տաճկական ռէժիմի ճնշումից։ Այնու ամենայնիւ Տաճիկ կառավարութիւնը նոյն իսկ այդ յայտագիրն ընդունելու տրամադրութիւն չէ ցոյց տալիս. մի օր յայտնում է թէ որոշ փոփոխութիւններ պէտք է մտցնել այդ ծրագրի մէջ, միւս օրը թէ Բ. Դրան մէջ ուրիշ ծրագիր է մշակվում և դրան կից շարունակ լրագրներում ամենայն օր տպագրվում է թէ Վեհափառ Սուլթանի կառավարութեան շնորհիւ բոլոր հպատակները երջանիկ են և՝ ամեն տեղ տիրում է խաղաղութիւն։ Թէ եւրոպական դիպլոմատիան ներկայ խնդրում դանդաղ է շարժվում, այդ պարզ է. պարզ է և այն որ այդ դանդաղ դիպլոմատիայի վերջին քայլը շատ վճռական է և Եւրոպան իրեն չի ենթարկի ուրացութեան նախատինքին, այլ եթէ արաւ առաջին հաստատ քայլը, կ'անէ երկրորդը, երրորդը և կը ստիպի Տաճիկ կառավարութեան կատարել Բեռլինի դաշնագրով իր վրայ առած պարտականութիւնները։ Այժմ հաստատ կարելի է ասել որ Բեռլինի 61-րորդ յօդուածի իրականացման վերաբերմամբ տաճիկ կառավարութիւնը գտնվում է բացասական դիրքի մէջ և նրա բոլոր ջանքերն ի զուր կը լինին խեղդելու այդ հարցը։ Տաճիկ կառավարութիւնը գուցէ՝ և համառական է, յուսահատական քայլեր կ'անի, որովհետև «արջը օրհասականից հզօրագոյն կուլին», բայց այդ բոլոր քայլերն ապարդիւն կը լինին և այժմ հաստատ է որ տաճկաբնակ հայը պիտի ազատութիւն ստանայ։

Անգլիական կառավարութեան բերան թերթը՝ «Daily News»-ը ամենայն քաղաքացիական և մարդասիրական ազնուութեամբ պահանջում է, որ այդ ազատութիւնը լինի իրական, էապէս և ոչ թէ ձևական, նա և նրա հետ անգլիական ազգի ամենաընտիր ներկայացուցիչները պահանջում են որ ռէֆորմները լինին արմատական, յարատև և պարգամելու ընդունակ և ոչ թէ վայր ի վերոյ, պայմանով։

'Ի նկատի ունենալով եւրոպական պետութեանց փոխադարձ յարաբերութիւնների այժմեան վիճակը, շատ դժուար է նախագուշակել, թէ Եւրոպան Հայաստանի վերաբերութեամբ լիակատար ինքնավարութեան վրայ կանգ կ'առնի և ոչ թէ ռէֆորմների. սակայն ինչպէս ասացինք, պարզ է, որ տաճկաբնակ հայի վիճակը պիտի բարւոքուի։ Բայց 'ի հարկէ գլխին է առել բարւոքել մի երկիր, ուր գաւառը աղքատութիւն է տիրում, ուր չկայ գաղափար ոչ օրէնքի, ոչ կարգի, ոչ իրաւանց, ոչ արդարադատութեան վրայ, ուր սովալլի ճընշումը ժողովրդի մէջ ոչնչացրել է մարդկային շատ յատկութիւններ՝ հասցնելով նրան մինչև վայրենութեան աստիճանի։

Տաճկաբնակ հայ ժողովուրդը 'ի հարկէ լսել է, որ իր ազատութեան ժամը հասել է, բայց այդ նրա վիճակին ամենևին չէ թեթևացնում, նա դեռ գտնվում է իրեն շրջապատող սարսափների ազդեցութեան տակ և դարաւոր փորձից նա գիտէ, որ կարող էին իրեն թանգ նստել այդ յոյսը։ Եւրոպան մինչև այսօր միայն լսում է Հայաստանում կատարուած բարբարոսութիւնների սոսկալի լուրերը, նա վճռում է վերջ դնել այդ բարբարոսութիւններին, սակայն նա անծանօթ է երկրի պայմաններին, ժողովրդի կեանքին, նրա նիստ ու կացին, երկրի աշխարհագրական դիրքին և այլն, և այլն։ Իսկ մի երկրում որ և է կարգ ու կանոն մտցնելու համար այդ ամենի մանրամասն ուսումնասիրութիւնը պէտք է ունենալ։ Եթէ չէ ուսումնասիրուած այն տեղը, ուր ձգվում է սերմը, չէ կարելի յոյս ունենալ, որ այդ սերմը պտուղ կը տայ։ Եթէ նոյն իսկ ռէֆորմներով բաւականանան, պէտք է ցոյց տալ և ապացուցանել թէ որքան պարարտ է այն հողը, որի վրայ ընկնում են նոր ռէֆորմները, թէ ինչպէս և ինչ կերպով պէտք է մտցնել այդ ռէֆորմները, որ կարողանան նրանք աճել, զարգանալ և միջոց տալ երկրի քրիստոնեայ ազգաբնակութեան ապրել ինքնուրոյն և երջանիկ կեանքով։ Հայաստանի գնացող եւրոպացի թղթակիցներից միայն պ. Դիլօնն էր, որ բացի սոսկալի կոտորածների, առևանգումների, բանտարկութիւնների մանրամասնութիւններից, անգլիական մամուլի միջոցով տեղեկութիւններ տալիս տեղական հայերի և քիւրդ ցեղերի մասին. բայց այդ տեղեկութիւնները դարձեալ կատարելապէս բաւարար չեն, որովհետև անվեհեր թղթակցի միսսիան էր ճշմարտութիւնը հաղորդել կոտորածների մասին։

Բայց խօսել երկրի մասին առհասարակ, մանրամասն ուսումնասիրել նրա աշխարհագրական դիրքը, նրա տնտեսական և քաղաքական վիճակը, գիտել թէ որչափ նոյն իսկ թիւրք և քիւրդ տարրերը կարօտ են ազատ լինելու տաճիկ պաշտօնեաների կեղեքումներից և այլն, և այլն, այդ բոլորը դեռ մնում են և առաջիկայ են հարկաւոր, որոնք մանրամասն ուսումնասիրեն երկիրը և նրա պայմանները։

Մեզ կ'առարկեն, թէ ինչպէս ուսումնասիրել այն երկիրը, ուր ոչ կարգ կայ, ոչ կանոն, ոչ հաղորդակցութեան կանոնաւոր ճանապարհներ, ոչ ճանապարհորդի կեանքի ապահովութիւն, և այլն։ Դրան մենք կը պատասխանենք. 1) թէ ուսումնասիրողների կարօտութիւնն էլ չէր լինի, եթէ Հայաստանը վայելէր այն կեանքը, ինչ որ վայելում է այժմ Եւրոպան։ Մարդիկ—եւրոպացիք Աֆրիկէի վայրենիների մէջ կարողանում են գործ կատարել, ուր մնաց Հայաստանում. 2) դեռ ոչ մի փորձ չէ եղել հայ մամուլի և հայ ժողովրդի կողմից կարևոր նախապատրաստութիւն ունեցող յատուկ կօմմիսարներ կամ թղթակիցներ ուղարկել Հայաստանն ուսումնասիրելու, 3) Կ. Պոլսոյ պատրիարքարանը և Տաճկաստանի առաջնորդարանները կարող էին այդ գործն իրենց վրայ վերցնել և հնար եղածի չափ մանրամասն տեղեկագիր հրատարակել այն երկրի մասին, որով հետաքրքրուած է այժմ ամբողջ Եւրոպան։ Եթէ բաղդակցմանի մանրամասն տեղեկութիւններ անհնարին լինի ստանալ, գոնէ մի բան անհրաժեշտ է, այն է իմանալ իւրաքանչիւր գաւառի և քաղաքի հայ և մահմեդական ազգաբնակութեան ճիշտ թիւը, և ահա թէ ինչու.—Զարմանալի մամուլի մէջ լուրեր են երևում, թէ այս ինչ Փոքր-Ասիական գաւառում, կամ այն ինչ քաղաքում մահմեդական տարրը գրգռուած է քրիստոնեայ ազգաբնակութեան դէմ։ Բայցաբերից եկողները նոյն են պնդում և ի նկատի ունենալով թէ անցեալը և թէ մահմեդական տարրի այժմեան գրգռուած դրութիւնը, պէտք է կը լինի միջոցներ ձեռք առնել մանաւանդ այն տեղերում, ուր մահմեդականները թւով աւելի են հայերից և կարող են բընաջինջ անել վերջիններին։ Այդ բոլորի համար անհրաժեշտ է, երկրի ուսումնասիրութիւն, նրան ամենամօտ ծանօթութիւն, և այդ պէտք է սկսել հէնց այժմեանից, անյապաղ։

Ս. Հ.

### ՔՆՆԻՉ ԿՈՄՄԻՍԻԱՆ

«Central News» հեռագիրը հաղորդում է Վարնայից ամսոյս 21-ին հետևեալը. Կ. Պոլսում կարծիք կայ, թէ հայկական Քննիչ Կոմմիսիայում ներկայացուցիչներ ունեցող պետութիւնները որոշել են յետ կանչել իրենց նուիրակներին, որովհետև թիւրքերի մասնակցութիւնը Սասունի կոտորածներին արդէն լիովին ապացուցուած է։ Սակայն իրագեկ շրջաններում հաւատ չեն ընծայում այդ կարծիքին։

### ՆՈՐԹՀԷՄՊԹԸՆԻ ՄԵԾ ՄԻՏԻՆԳԸ

«The Daily News»-ից իմանում ենք, որ ամսոյս 21-ին մի բազմամարդ միտինգ է գումարուել Նորթհէմպթընի Town Hall-ում թիւրքական անգթութիւնների դէմ բողոքելու համար։ Նախագահել է դօկտոր Ջիպմանը և նրա ակտիւ կարդացուել է արմատական կուսակցութեան պարագլուխ և «Truth» լրագրի խմբագիր նշանաւոր Պարլամենտի անդամ միստր Լաբուշէրի հետևեալ նամակը. «Իմ բժիշկը պատուիրել է ինձ խոյս տալ բազմամարդ ժողովներից, եթէ կամենում եմ առաջուայ մարդկութեան ընդհանուր թշնամու, այն է ինֆլուէնցայի ինձ պատճառած տկարութիւնից. այլապէս ես անպատճառ ներկայ կը լինէի հայկական խնդրի առթիւ գումարուած միտինգին։ Ես այն մարդկանց թւից չեմ, որոնք կարծում են, թէ Անգլիան պարտաւոր է տիեզերքի ոստիկանը դառնալ. սակայն հայկական դատը մի բացառիկ բան է։ Մենք շատ անգամ միջամտութիւն ենք արել Թիւրքիայի իշխանութիւնը հպատակ ազգերի վրայ հաստատուն պահելու մտքով, որովհետև մեզ թւում է, թէ թիւրքական պետութեան գոյութիւնն անհրաժեշտ է Եւրոպայի զօրութեան հաւասարակշռութիւնը պահպանելու և Ռուսաստանի ձգտումը դէպի Միջերկրական ծովը խափանելու համար։ Ես կըցանկայի ցամաքային Եւրոպային թողնել իր սեփական հաւասարակշռութիւնը պահելու հոգսը, և կարծում եմ, թէ մեր բանը չէ արգելել Ռուսաստանին Միջերկրականի մէջ մտնելու մի ծովային դուռ գտնել։ Ցամաքային դէպս ես երբէք չէի յօժարուել պաշտպանել թիւրքական կառավարութիւնը՝ մեր գլխին այդ խարխուլ պատուարի տեղ պահելու համար՝ օգնելով Թիւրքիային ճնշել քրիստոնեայ ազգութիւնները, որովհետև ես էլ միստր Գլադստոնի նման համոզուած եմ, թէ «անհրաժեշտ է բարոյ ու բոլորով քշել վանտել թիւրքերին»։ Հայերը դարերէ 'ի վեր չարչարուել են թիւրքերից, և մինչև որ մենք չյապաւենք մարդկութեան պարտքը մասամբին քաղաքական պահանջներից սոսոր դասել, հայերի չարչարանքը կը շարունակուի։ Դա մահմեդականների իշխանութեան անհրաժեշտ հետևանքն է, ուր որ միայն նրանք տէր են քրիստոնեաներով բնակուած երկրներում,—իսկ մահմեդականների մէջ թիւրքերից վատթար ազգ չկայ։ 'Ի նկատ առնելով այն փաստը, որ մեր շնորհիւն է յառաջ եկել մարդկութեան և քաղաքակրթութեան անարգանք բերող իրերի այս վիճակը, ես գոհութեամբ եմ տեսնում, որ անգլիական ազգն արդէն զգացել է մեր անցեալ քաղաքականութեան անարդարութիւնը և պահանջում է ուղղել դրան։—Ձեզ անձնուէր Հ. Լաբուշէր։

Գեներալ. Ջ. Բրօունն առաջարկեց և Նորթհէմպթընի «Արմատական կուսակցութեան» նախագահ միստր Կրիկն պաշտպանեց հետևեալ որոշումը. «Այս միտինգը խորապէս դատապարտում է թիւրք կառավարութեան աչքի տակ Հայաստանում կատարուած գեղալին ոճիրները և դիմում է Վեհափառ Թագուհու կառավարութեան, որպէս զի գայ իր դաշնագրական պարտաւորութեանց համեմատ, անմիջապէս վերջ դնէ Տաճիկ-Հայաստանում տիրող բարբարոսական վարչութեան և իրագործել տայ անմիջի ռէֆորմներ Եւրոպայի իրական և յարատև հսկողութեան ներքոյ»։

Պարլ. անդ. միստր. Փ. Ստեվընսընն և Պարլ. անդ. միստր Գ. Ջոնինգը պաշտպանեցին այդ որոշումը։ Միստր Ստեվընսընն ասաց, թէ առաջարկուած ռէֆորմները կամ լաւ կը լինին և կամ վատ, նայելով թէ արդեօք Եւրոպայի մի իրական ու յարատև կօնտրօլ կը լինի մէջտեղը, թէ չի լինիլ։ Միստր Ջոնինգն ասաց, թէ Անգլիայի խիղճը վերջապէս սաստիկ յուզուած է։ Նոր հրատարակուած պաշտօնական զեկոյցները բաւական երկայններ չէին, այլ յարատև ու մշտական շարժում և նախօրօք ընդունուած ու գիտակցօրէն գործ դրուած քաղաքականութեան հետևանքներ։ Որոշումը միաձայն ընդունուեցաւ, և կարգադրեցին պատճէնները ուղարկել լորդ Ռօզբերիին և լորդ Կիմբերլէյին։

### ՌԷՖՈՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

«Kölnische Zeitung»-ին ամսոյս 22-ին հեռագրում են Պոլսից, որ եթէ Բ. Դուռը պետութիւնների առաջարկած ռէֆորմների ծրագիրը մերժելու լինի, մի եւրոպական դեսպանաժողով կը գումարուի։

### ՄԻ ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՆԱԽԱՃԱՇ

«The Daily News»-ի մայիսի 23-ի համարում կարդում ենք, որ ամսոյս 22-ին Անգլօ-Հայ ընկերութեան նախագահն և պաշտօնատարները հարկել են նախաճաշով Պրօֆէսոր Հաւուզի հայկական գործերի յանձնաժողովի անդամներին Westmister Palace Hotel'-ում պարլամ. անդ. միստր Ստեվընսընի նախագահութեամբ։ Հիւրերի թւում 'ի միջի այլոց ներկայ էին՝ պ. ա. սէօր Արթուր Հայթըր, պարլ. անդ. սէօր Ջօրջ Սիտուէլ, սէօր Ջօն Րօբինզօն, պարլ. անդ. միստր Ջ. Էլլիս, պարլ. անդ. միստր Փ. Ջոնինգ, պարլ. անդ. միստր Հիւգ Հօր, պարլամ. անդամ դօկտոր Ֆարքարսըն, պարլ. անդամ միստր Չարլզ Ֆենէին, պարլ. անդ. միստր Ալֆրէդ Ուէբբ, միստր Կոյտըն, Կանօն Մակ Կոլ, դօկտոր Կլիֆորդ, պրօֆեսոր Ագար Բիտ, գերապ. Ջ. Բիվ, գերապ. Կոպլէնդ Բօյլ, սէնեոր Վալերա (հայերի խօսալական բարեկամ), միստր Լևիս Մօրիս, միստր Բէլի Կլայտըն, պրօֆեսոր Թումայեան, պրօֆեսոր Չերազ, պրօֆեսոր Գրադլէսեան, գերապ. Փ. Գրին, միստր Պետրոս Աղանուր և պարլ. անդ. միստր Ատկին։

Նախագահը. «Թագուհու կենացն» առաջարկելով, ասաց. Այս բաժակն առաջարկում եմ յարեշտութիւն մի զգլոյի, որի վեհապետութեան ներքոյ միարան ապրում են բազմամիլիօն քրիստոնեաներ և ուրիշ կրօններ դաւանող շատ և շատ ազգեր. և ես վստահ եմ, որ մեր հնդկաստանցի մահմեդական հպատակակիցները, որոնց կեանքը, հատուածն ու գոյքը լիովին ապահովուած են զրկանքից, փափագելով կըփափագեն, որ Հայաստանի բնակիչներն էլ, ինչ կրօնի էլ պատկանին, միևնոյն արտօնութիւնները վայելեն։ (Համաձայնութիւն)։ Այդ կենաց բաժակն բառ արժանայն յարգութեամբ յետոյ

Նախագահը, նորից ոտքի կանգնելով ասաց. Այս հայկիրութիւն խորհուրդն էր միասին հաւաքել երկու ընկերութեանց անդամներին, որոնք ձգտում են միևնոյն նպատակի, այն է՝ վերջնական ռէֆորմներ մտցնել Հայաստանում Եւրոպայի յարատև հսկողութեան ներքոյ՝ մի եւրոպացի գերագոյն յանձնակատարի ձեռքով, որ Օսմանեան հպատակ չլինէր և անմիջապէս պատասխանատու լինէր շահերից պետութիւններին։ Միայն այդպիսի յարատև եւրոպական վեհանձնութեամբ կարելի է իրական ռէֆորմներ տալ Հայաստանին, փոխանակ այն կեղծ ռէֆորմների, որի օրինակներն անցեալում շատ անգամ ցոյց է տուել Բ. Դուռը։ (Լսեցէք, լսեցէք)։

Պարլ. անդամ սէօր Արթուր Հայթըրն առաջարկեց. «Յաջողութիւն Պրօֆէսոր Հաւուզի կօմիտէին և Անգլօ-Հայ Ընկերութեան», և այդ առթիւ բացատրեց երկու կազմակերպուած մարմինների գործունէութեան նշանակութիւնը, որ պարզ երեւաւ Սէնտ Ջէյմս Հօլլ մեծ միտինգում արտայայտուած ազգային զգացմունքների մէջ։ Ես ուրախ եմ, ասաց նա, որ երկու քաղաքական կուսակցութիւնները և եկեղեցու բոլոր ճիւղերը ներկայացնող ընկերութեան պատգամաւորները գնալու են Առաջին նախարարի մօտ, որ նմանապէս կը ցանկայ բուն հայազգի ջնջողմէնների կարծիքը լսել։

Պարլ. անդ. սէօր Ջօրջ Սիտուէլ շնորհակալութեամբ յիշատակեց այն սիրալիր ընդունելութիւնը, որ գտաւ իրենց գործն անգլիական մամուլի կողմից։ Ես հաւատացած եմ, ասաց նա, որ մամուլի կողմից մեծ հասած նեցուկն ու նպաստը ոչ միայն լիակատար համակրութեան նըշաններ էին դէպի հայերը, հապա և պարզ ապացոյց, որ մեր գործն իրօք դիպել էր ազգային խղճի լարերին։ Պրօֆէսոր Հաւուզի կօմիտէն կազմուած է քաղաքական կարծիքի ամեն գոյները ներկայացնող ջենտլմէններից. սակայն ես համոզուած եմ, որ Հայաստանին գալով՝ նրանք բոլորն էլ լիովին համամիտ են և միարան։ Իմ փափագածը մամուլի նկատմամբ յաւելացնել այն է, որ նա չշեղուի իւր նպատակից և թոյլ չըտայ մոլորեցնել իրեն ռէֆորմի որևէ խարխլական նախագծով, որի նմանները Թիւրքիան շատ անգամ առաջարկել է և ոչ մի անգամ չէ իրագործել։ (Համաձայնութիւն)։

Դեռ շատ վաղ է խօսք բաց անել լրագրներում յայտարարուած ռէֆորմների ծրագրի մասին, բայց եթէ առաջարկուած ծրագիրն իրօք այդ է,—դա աւելի հեղնութեան արժանի բան է, քան լուրջ քննութեան։ Թողնենք այն հանգամանքը, որ հայ համայնքներին թոյլ պիտի տրուի անձամբ հաւաքել իրենց տուրքը. ինչ ասենք այն առաջարկութեան մասին, որ քիւրդերը պիտի զինաթափուին այն ժամանակ, երբ որ նրանց զէնքերը «գործածութեան մէջ չլինին»։ (Ծիծաղ)։ Կարծեօք պէտք էր ենթադրել, թէ նրանց զինաթափ անել հարկաւոր կը լինի հենց այն ժամանակ, երբոր զէնքերը գործածութեան մէջ լինին։ (Նոր քրքիջ եւ «լսեցէք լսեցէք»)։ Հայերին պէտք էր անձամբ պաշտպանելու միջոց տալ. որովհետև մեր օրերում երբ մի պետութիւն արագաշարժ հրացաններ ունի և Կրուպի թնդանօթներ, նա կարծեմ չպիտի վախենար զէնք կրելու իրաւունք տալ սակաւաթիւ անհրահանգ գիւղացիներին։ Ցաւոք բարձրագոյն յանձնակատարը մնալու է, ասում են, իւր պաշտօնում, մինչև որ ռէֆորմներն իրագործուին. ուրեմն նա մինչ 'ի մահ այդ պաշտօնում կը մնայ—(ծիծաղ)—որովհետև ամենևին սուրբ չկայ ենթադրելու, թէ այդ բարձր յանձնակատարը և կամ քրիստոնեաներից և մահմեդականներից կազմուելիք խառն Կոմմիսիան կը փութայ որ և է բարեփոխումն իրագործել և չի շատանայ լոկ զեկուցումներ տալով Բ. Դրան։ Դժուար բան է հնարել մի լաւ վարչութեան

ծրագիր, եթէ երկու հարևան ժողովուրդներն իրար թշնամի են. սակայն կարծում եմ, որ հնարաւոր է ստեղծել հայերի համար մի այնպիսի վարչութիւն, որի գլուխը Եւրոպային պատասխանատու և մի ընդունակ ու մի՛ եւրոպացի յանձնակատար լինէր։ (Հաւանութիւն)։

Կանոն Մակ Կօլ՚ն ասաց, թէ պատրաստ է ապացուցանել, որ Սասունի կոտորածները դեռ երկու տարի առաջ նախապծուած էին Բարձ. Դռան խորհրդում քրիստոնեայ բնակիչներին ընկճելու մտքով։

Դոկտոր Կլիֆֆորդը, «Անգլօ-հայ ընկերութեան պաշտօնատարների», այն է՝ նախագահ միստր Ստեվընսոնի, գանձապահ միստր Ձուէնսի և քարտուղար միստր Ատկինսի կենաց բաժակն առաջարկելով ասաց. Հաստատ համոզուած եմ, որ անհրաժեշտ է մի եւրոպացի բարձր յանձնակատար նշանակել Հայաստանում, և յոյս ունիմ, որ այդպէս էլ կը լինի։ Որոտալից ծափահարութիւններ յարոյց առենախօսը, երբ գոչեց. Ինչու չանուրինք, որ միստր Գլադստոնն էլ իր կարծիքը յայտնէ։ Դա մի անհնարին բան չէ, բնաւ։ Ես կարծում եմ, որ եթէ այս երկու համաստութիւնները սրտով ու գլխով միանան, անշուշտ մի հնար կը գտնեն առիթ տալու միստր Գլադստոնին, որ նա, Լօնդոն գալիս, մի տասն րոպէ՝ տեղ ճառով ոտքի հանէ ամբողջ Անգլիան։ Ըստ իս դա մի անհրաժեշտ բան է։ Միթէ մենք չե՞նք կարող միստր Գլադստոնին դիմել—(սաստիկ ծափահարութիւն)—կամ թէ նոյն իսկ Դորոթէյին — (ծիծաղ) — եթէ մեր նպատակին հասնելու համար ուրիշ միջոց չգտնենք։ Մենք կարօտ ենք մի հրամայական ձայնի, որ արտայայտիչ լինէր ամբողջ ազգի յանկութեան, որին ոչ որ համարձակուէր ընդդիմանալ։ (Լսեցէք, լսեցէք։) Ամբողջ Անգլիայում, ուր ես ճամբորդեցի նորերս, թէ անգլիական և թէ նօնկօնֆորմիստ եկեղեցիները վերին աստիճանի հետաքրքրուած են Հայկական հարցով. նրանք իրօք սկսել են գրգռուած լինել մեր կառավարութեան ընթացքից և մի վճռական գործի են սպասում անհամբեր։

Միստր Պետրոս Այանուրը միևնոյն կենաց առթիւ խօսք առաց։

Միստր Զուէնիր պատասխանեց թէ իր և թէ իր ընկերների կողմից։ Մենք մեր ձեռքից եկածն արինք, ասաց նա, տաճկական բռնութեան տակ տառապող հայերի վիճակը բարւոքելու համար և անսայթաք հաւատարիմ մնացինք այն սկզբունքին, թէ մեր ընկերութիւնը չպիտի ծառայական գործիք դառնայ ոչ և է կրօնական մարմնի ձեռքում։ Անցեալ տարուայ վերջերը «Times»-ն ասել էր, թէ միստր Գլադստոնի ձայնը միայն կարող է անգլիացւոց ոտքի հանել մեր երկրի մէկ ծայրից մինչև միւսը։ Ցաւէ Տէր, որ միստր Գլադստոնը հնար գտնէ մի քանի խօսք հնչեցնելու, որովհետև այդ մի քանի խօսքն էլ հերիք կը լինի ազդելու ամբողջ ազգի վրայ։ (Հաւանութիւն։) Գալով մամուլի մատուցած օգնութեան, հայերը յաւիտեան շնորհապարտ կը լինին «The Daily Telegraph»-ին, «The Daily News»-ին և «Times»-ին այն մեծ ջանքերի համար, որ գործ դրին այդ թերթերն 'ի պաշտպանութիւն նրանց դատի։ (Բարձրաձայն հաւանութիւն։)

Այնուհետև վեր կացաւ պրօֆեսօր Զերպայ, որին ծափահարութեամբ ողջունեցին։ Նա խօսեց ընտիր անգլիերէն լեզուով։

Միստր Ստէվընսոնը, պատասխանելով նրան, մեծ բաւականութիւն և խորին շնորհակալութիւն յայտնեց և իր ճառի մէջ շեշտելով շեշտեց, որ անհրաժեշտ է արմատական ռէֆորմներ մտցնել Հայաստանում և մի բարձր յանձնակատար նշանակել, որ բոլորովին անկախ լինէր Բ. Դռան իշխանութիւնից։ Մի այդպիսի յանձնակատար կարելի է գտնել, ինչպէս որ յուզում է Ասպանտեան ովկիանոսի թէ այս, թէ այն ափերից, Աւստրո-Ունգարիայում, որ արդէն գեղեցիկ կերպով ցոյց տուաւ իր շնորհը Բօսնիայի և Հերցէգօվինայի վարչութեան մէջ։ (Լսեցէք լսեցէք։)

Միստր Է. Ատկինսը բաժակ առաջարկեց «հիւրերի» կենացը, որոնց կողմից պատասխանեց Պարլամէնտի անդամ Միստր Ջ. Էլլիսը։ Նա ասաց, թէ լիովին համամիտ է դոկտոր Կլիֆորդի կարծիքին, որովհետև ինքն էլ սաստել է, որ կրօնական աշխարհն արդէն սկսել է գրգռուել կառավարութեան յամր ու դանդաղ քայլերից, մինչդեռ այդ կրօնական անձերից շատերը կառավարութեան հաւատարիմ պաշտպաններն են։ Ես ամենայն վստահութեամբ կարող եմ ասել, կներեք պարոն առենախօսը, որ կառավարութիւնը հզօր աջակցութիւն կը գտնէ ամեն ողջամիտ անգլիացիներից, եթէ նա յայտնապէս ցոյց տայ, որ թոյլ չի տալ խաղալ կամ պատրանք մտցնել այս հայկական գործի մէջ։

Դեր. Փ. Գրինը (հիւս. Ամերիկայի նահանգների կողմից) և միստր Աւլտոնը (Թիֆլիսի կողմից) նմանապէս խօսեցին։ Այնուհետև հանդիսականները ցրուեցան։

Փ. Վ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՕԼՍԻՑ գրում են «Նովոստի»-ին. —Անգլիական, ֆրանսիական և ռուսաց պետութիւնների ներկայացուցիչների կազմած յայտագիրը աւելի մեղմ է, քան սպասում էին սուլթանի պալատում և Բ. Դրան մէջ. Ռէֆորմների գործում վճռական խօսքը թողնուած է Տաճկաստանին, ուստի Կ. Պօլսոյ կառավարութիւնը մի քիչ հանգստացել է։ Նոյն իսկ խառն ժանդարմների կազմելու պահանջը ահ չէ պատճառում, որովհետև քրիստոնեայ ժանդարմները (թուրքերը կաշխատեն հնար եղածին չափ սակաւացնել նրանց թիւը) պիտի գլխաւորին մահմեդական օֆիցէրների իշխանութեան տակ։ Միևնոյն ժամանակ Բ. Դուռը յոյս ունի ոչնչացնել ծրագրի միջից իրեն գլուխ չեկող մի քանի ռէֆորմներ, իր կողմից նոր հակառակ ծրագիր ներկայացնելով։ Մանաւանդ հաճելի չէ թուրքերին այն առաջարկութիւնը, որ պահանջվում է Հայաստանից ժողոված հարկերի մի մասը կանխապէս ծախսել երկրի կարիքների համար և միայն մնացորդն ուղարկել մայրաքաղաք, մինչդեռ այժմ տաճկական ելևմտից նախարարութիւնը քամում և ծծում է բոլոր գաւառների հիւթը։ Աւստրօ-Հունգարիայի դեսպան պ. Կալիչէի վերջին տեսակցութեան ժամանակ սուլթանի հետ, վերջինս կրկին յիշեցրեց Կալիչէին թէ յոյս ունի որ Տաճկաստանի և Աւստրօ-Հունգարիայի մէջ եղած բարեկամական յարաբերութիւնները կը զղջէ Վիեննայի կաբինետին բարեմիտ ընթացք բռնել դէպի հայկական խնդիրը. Կալիչէն առաջուան պէս պատասխանեց թէ այդ մասին ինքը կը հաղորդէ իր կառավարութեան։ Այդ խօսակցութիւնից յետոյ Արգալ-Համիդը նրան ընծայ ուղարկեց թանգ փայտից մի սեղան, որի վրայ ինքն է աշխատել, և իր ամենաւերջին որդու Բուրհանէդին-էֆէնդու պատկերը։

Վիլհելմ երկրորդին Բերտրամ էֆէնդու ձեռով ուղարկած ծրարը նոյն նպատակն ունի։ Դրանով Արգալ Համիդը դիմում է գերմանական կայսեր բարեկամական օգնութեան։ Ասում են թէ սուլթանը չափազանց զարմացած է որ Ռուսաստանը միացել է Անգլիայի նախաձեռնութեան և չէ պատճառում իր քաղաքականութեան մանաւանդ Ճափոնիայի հետ ունեցած ընդհարումից յետոյ։ Երբ վճռուեց թէ Բերտրամ էֆէնդին չի գնալ ծովային ճանապարհով, Օդեսայով, այլ Express Orient երկաթուղու գնացքով, սուլթանը հրամայեց հարցնել պ. Նելիդովին, թէ արդեօք այդ հանգամանքը չի՞ ընդունուիլ իբրև անվստահութեան նշան դէպի Ռուսաստանը։ Ռուսաց դեսպանը պատասխանեց, թէ ինքն այդպիսի բացատրութիւններ տալու մտքից հեռու է։ Առաջ բերած այս փոքր փաստը շատ բնորոշ է. դրանից երևում է որ սուլթանը ամեն ջանք ի գործ է դնում, որպէս զի Ռուսաստանին իր դէմ չզրգռի։

* * *

«Արձագանքի» անցեալ համարներում հաղորդեցինք անգլիական «Pall-Mall-Gazett» լրագրի խմբագրի և Պարլամէնտի անդամ պ. Կիւբարի խօսակցութիւնը սուլթանի հետ և նրա Հայաստան գնալու մտադրութիւնը։ Այժմ անգլիական լրագրները հաղորդում են, թէ պ. Կիւբարը այլ ևս չի գնալ Հայաստան, որովհետև սուլթանը փոխել է իր մտադրութիւնը, և թէև առաջ նրան իրաւունք տուաւ գնալ և անձամբ քննել Սասունի կոտորածի գործը, բայց այժմ այլ ևս իրաւունք չէ տալ։ Ուստի պ. Կիւբարն էլ վճռել է, այլ ևս չգնալ Հայաստան, ենթադրելով որ այնտեղ մեծ դժուարութիւնների կը հանդիպի և սուլթանին կը վշտացնի...Sic transit gloria correspondentis!։

* * *

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ հեռագրում են. —«Մոսկվայի համալսարանի կողմից Վեհափառ Հայրապետին ողջունելու գնացին պատգամաւորներ պ. Ս. Մամիկոնեանը և Տ. Եղիշեանը։ Նորին Վեհափառութեան համար պատրաստուած է արտակարգ գնացք։ Մոսկվա ժամանելն սպասվում է ամսոյ 24-ին։

* * *

Գ. Դիլօնը մի թեթև տկարութեան պատճառով յետաձգեց իր մեկնելը Թիֆլիսից. յարգելի հրապարակախօսը մեզ մօտ հիւր կը մնայ մինչև չորեքշաբթի օրը և ապա Բաթումի վրայով կ'ուղևորուի դէպի Լօնդոն։

* * *

ԳՈՐԻՍ աւանից (Զանգեզուրի գաւառ) մեզ գրում են. —Թէև այս տարի լրանում է հօյ ազգի պատմական անհամեմատելի վանքերից մէկի՝ Տաթևի հազարամեակը և թէև լուրեր կային թէ այդ հազարամեակը պիտի տօնուի փառաւոր հանդիսով, սակայն մինչև այժմ նախապատրաստութեան հետքն անգամ չէ երևում։ Տաթևը իր շրջականերով և ամբողջ Սիւնիքը լի են պատմական այնպիսի յիշատակներով, որ արժէր հազարամեակին այնպիսի կերպարանք տալ, որ ամեն կողմից հայեր գային և ծանօթանային իրենց հայրենիքի պատմական նշանաւոր յիշատակների հետ և միթէ այս տարի եւս հազար տարին թևակոխելուց յետոյ այն վանքը, որ մի ժամանակ գիտնական ծայրագոյն վարդապետների տիտղոս շնորհելու արտօնութիւնն ունէր, էլի զուրկ կը մնայ գէթ կանոնաւոր տարրական դպրոցից։

* * *

### ՀԱՐԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՍԻՍՏԵՄ

Շարունակ մամուլի մէջ գանգատներ են լսվում մեր երկրի հարկահանութեան սիստեմի դէմ և շատ արդար գանգատներ։ Դեռ անցեալ համարում մենք հաղորդեցինք, թէ ինչպէս Գօրու գաւառի գիւղացիք ստիպուած թողել են իրենց գիւղական պարապմունքները և ներկայանալով Թիֆլիսի նահանգական ատեանին՝ բողոքել որ իրենց տանուտէրը փոխանակ տարեկան նրանցից հաւաքելիք 1200 ռ. հարկի պահանջում է 2400։ Վերջերս Կովկասեան մամուլի գրեթէ բոլոր օրգաններն էլ հաղորդեցին որ նոյն գաւառի շատ գիւղերում գիւղական տանուտէրերը ծածկել են գիւղացիներից հաւաքած հարկերը, ժամանակին չեն մտցրել գանձարան և այժմ տէրութիւնը նրանցից կրկին է պահանջում այդ հարկերը։

Շատ և շատ են օրինակներ, որ երբ հարկահանները գիւղացուց հարկը պահանջել են և նա առաջարկել է անդորրագիր իբրև ապացոյց հարկ վճարած լինելուն, դուրս է եկել, որ այդ «անդորրագիր» անուանուածը ոչ այլ ինչ է եթէ ոչ գինու կամ օղու շշից պոկած թղթի կտոր, որ տուել են գիւղացուն խաբելու համար։

Այս միևնոյնը պատահել է տանուտէրների և գիւղացիների առանձնակի շատ ուրիշ գումարների վերաբերութեամբ։ Պետական շրջաններում վաղուց է հարց բարձրացել այդ չարիքի առաջն առնելու համար և զանազան փորձեր են եղել գիւղացուն ապահովելու հարկահանների խարդաւանութիւնից։ Մի փորձ ևս կատարուեց Կամենից-Պոդօլսկի նահանգում, ուր սկսեցին գիւղացիներին անդորրագիր մարկաներ տալ, յատկապէս այդ նպատակով պատրաստուած։ Անգրագէտ գիւղացիների համար իհարկէ՝ անհասկանալի է մնում անդորրագրի մէջ գրուածը, բայց նա կարող է որոշել մարկանները և նրանց արժէքները նրանց ձևերից։ Այդ փորձը մեծ յաջողութիւն ունեցաւ Կամենից-Պոդօլսկի նահանգում և մայրաքաղաքի մամուլը խորհուրդ է տալիս որ նոյն փորձերը կատարուեն և Ռուսաստանի միւս նահանգներում ևս։

Կասկած չկայ որ Կովկասի նահանգները պակաս կարօտութիւն չեն զգում հարկահանութեան սիստեմի բարւոքելուն և շատ ցանկալի կը լինէր որ այդ փորձերը մեզ մօտ ևս կատարուէին՝ սկսելով առ այժմ Թիֆլիսի նահանգից։

* * *

Թագաւոր Կայսրը սոյն մայիսի 3-ին Ամենաողորմածաբար բարեհաճել է թոյլատրել զինուորական բժիշկ Կարապետ (Գերասիմ) Մելիք-Բէգլարեանին ընդունել և կրել Պարսից Շահի շնորհած Առիւծի եւ Արեգակի շքանշանի երրորդ աստիճանը։

* * *

Թիֆլիսի քաղաքային-առողջապահական խորհուրդը ձեռնարկում է մանրամասն տեղեկագիր կազմելու Թիֆլիսի առողջապահական դրութեան մասին և այդ նպատակով պիտի լինի մանրամասն զննութիւն բոլոր տների, բնակարանների, առևտրական-արդիւնաբերական հիմնարկութիւնների և այլն։ Մինչև այժմ այդ զննութիւնները մասնաւոր բնաւորութիւն են ունեցել, իսկ այժմ առողջապահական խորհուրդը իւրաքանչիւր տան համար առանձին թղթիկ է պատրաստել, որոնց մէջ պիտի արձանագրուեն քաղաքային բժիշկների և տեխնիկների նկատողութիւնները։

* * *

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են.—Վեհափառ Հայրապետը պաշտօնական գրութեամբ բարեհաճել է հրամայել Երևանու թեմի ժամանակաւոր կառավարիչ Անանիա եպիսկոպոսին հեռանալ Երևանից և գնալ Տաթևի վանքը։

* * *

ԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ մեզ գրում են. «Կիրակի, ամսոյ 14-ին, քաղաքի հաւատարմատարները երկրորդ թէ երրորդ անգամ հրաւիրուած էին ոստիկանատան դահլիճը մի նոր բարեգործական ընկերութիւն ևս հաստատելու մասին խորհրդակցելու համար։ Ինչպէս յայտնի է, այստեղ վաղուց արդէն գոյութիւն ունին—Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան ճիւղը և մի Աղքատանոց։ Հաւատարմատարները եկան այն եզրակացութեան, որ թէև շատ ցանկալի բան է հնարաւոր եղածին չափ աւելի

# ՖԵԼԻԵՏՕՆ

## ՀԱՅԵՐԻՆ ԲՆԱՋՆՋ ԱՆԵԼՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

(«The Daily Telegraph»)

Այս յօդուածը մեր յատուկ գործակալի տասներորդ նամակն *) է Հայաստանից։

Տաճկա-Հայաստանի արդի պատմութեան անտեղեակ մարդիկ կը դժուարանան հասկանալ Սասունի կոտորածը յառաջ բերող պատճառները։ Թիւրքերը մեղադրեցին թէ հայերին և թէ քիւրդերին, ասելով թէ դրանք սկսեցին կռիւները. միւս կողմից՝ հայերն էլ, քիւրդերն էլ միաբան մեղադրում են թիւրքերին, և փաստեր ցոյց են տալիս, որ վերջին մեղադրանքը ճշմարիտ է։ Օսմանեան կառավարութեան անցեալ երեք տարուայ գլխաւոր ձգտումն էր վտարել, հեռացնել հայկական տարրը թիւրք պետութեան սահմաններից, և թէև դժուար է ըմբռնել, թէ ինչ օգուտ կարող էր ունենալ Թիւրքիան, հարկեր վճարող և երկիրը մշակող հպատակներին աքսորելով, բայց և այնպէս թիւրքերը բռնի տարագրել են հայերին, քիւրդերը բռնի յափշտակել են ամբողջ գիւղեր և թիւրքն ու քիւրդը միասին կոտորել են յաւակապէս այն հայերին, որոնք քաջութիւն էին ունեցել չթողնելու իրենց հայրենի երկիրը։ Այդ բոլոր միջոցները միայն լրացրել են մէկ մէկու, և Համիդիէ հեծելազօրի կազմութեան կէտ նպատակին եղել է բնաջինջ անել հայերին։ Այս ճշմարտութիւնը հէնց սկզբից գիտացել են Կ. Պօլսում, և թէ զինուորական ու թէ աշխարհական պաշտօնեաները, թէ քիւրդերն և թէ նոյն իսկ հասարակ ֆանատիկոսները բացայայտ կերպով քարոզել են ամբողջ պետութեան մէջ։

Գալով բռնի արտաքսման, բաւական է երկու շօշափելի օրինակներ յառաջ բերել։ Չիլկանի գիւղում (Ալաշկերտի գաւառ), ուր քիւրդերը հրաման են ստանում հեռացնել բոլոր հայերին, կային երկու ունևոր վաճառականներ—մէկն էր Աւագ Բաղդիկեանը, միւսն էր նրա եղբայր Եզօն։ Քիւրդերը յարձակվում են նրանց խանութի վրայ 1893 թ. մայիս ամսին, երկուսին էլ չարաչար սպանում են և նրանց արծաթը, ապրանքը, ոչխարներն ու եզները յափշտակելով հեռանում։ Սպանուածների կեանքը չէր կարելի հարկաւ վերադարձնել, բայց կառավարութիւնը պարտաւոր էր գոնէ նրանց գոյքը փոխարինել, մտածեցին ժառանգները, և գանգատ տուին թիւրք իշխանութեան։ Իշխանաւորները պատասխանեցին. «Մենք ինչ կարող ենք անել։ Ձեր վրայ յարձակուողները քիւրդերն էին։ Նրանք ոչ թէ ձեր կեանքը, այլ մերն էլ չեն խնայում։ Դուք էլ թիւրքերի պէս վարուեցէք—անձամբ յետ խլեցէք ձեր գոյքը, եթէ միայն կարող էք։ Իսկ եթէ ոչ, դուք հօ մեր խեղճ ժողովրդից աւելի փրկութիւն գտնելու հնար ունիք—չէ՞ որ Ռուսաստանի ճանապարհը ձեզ համար բաց է։ Գնացէ՛ք»։ Եւ ժառանգները գնացին, և նրանց հետ հարիւրաւոր հայեր գնացին։

Ղարաքիլիսայի աւելիկեան կողմը նստած են հինգ հայաբնակ գիւղեր՝ Քիզը, Մանկասար, Զուլջան, Զիրօ և Կոփ քիրան։ Մինչև անցեալ տարի դրանք շէն ու բարգաւաճ գիւղեր էին, և քրիստոնեայ բնակիչները լաւ կեանք էին վարում. բայց որովհետև Ալաշկերտի գաւառում գտնուելու դժբաղդութիւն ունէին, ուստի նրանց հրամայեցին անյապաղ դուրս քշել։ Եւ որպէս զի երկար բարակ խօսակցութիւն չլինի՝ Եյուբ փաշան ուղարկեց իր երեք որդոց գրաւել այդ հինգ գիւղերը։ Փաշայի երիտասարդ որդիքն էին Ըլյզօ բէկը, Քալիֆ բէկն ու Իւսուֆ բէկը—երեքն էլ Համիդիէի սպաներ, որոնց արարքի համար կառավարութիւնը հարկաւ շատ և շատ պատասխանատու է։

Յայտնի տան այդ երեք շառաւիղներն անցեալ գարնան իրենց սպառազէն արբանեակներով ճանապարհ ընկան։ Գնացին հիւր իջան գիւղերում և մի քանի օրից յետոյ հայերի գրեթէ բոլոր ստացուածքը յափշտակեցին։ Անցան մի քանի ամիսներ, և նրանք գրաւեցին ամեն բան, իսկ հայերին վռնդեցին իրենց սեփական տնից ու տեղից, սեփական գիւղերից ու գաւառից և քշեցին Ռուսաստան, ուր նրանք այժմ կամ մուրացկանութիւն են անում կամ թէ սովից մեռնում։ Այդ հինգ գիւղում կար մօտ չորս հարիւր տուն, և եթէ հաշուենք, որ այդ տներից իւրաքանչիւրը միջին թուով տասնհինգ անդամ ունէր,—մի շատ չափաւոր միջին թիւ հայերի համար,—բոլոր գիւղացոց գումարը կը լինէր առնուազն հինգ հազար հոգի, որոնց մէջ և ոչ մի քիւրդ չէր գտնվում։ Այդ պատահեցաւ անցեալ գարնան։ Իսկ այս գարնան ոչ մի հայ չկայ, ոչ մի քրիստոնեայ չկայ այդ հինգ գիւղում, ոչ էլ դրանց շրջակայքում, բացի մէկից, և այդ մէկն է Ակսոնք աղան, որ սովորաբար ապրում է Եռնջալուում։ Դեռ անցեալ տարի նա մի հարուստ մարդ էր, բազմամարդ ընտանեաց տէր, ազդեցիկ և արգոյ. այժմ օրական հացի անգամ կարօտ է։ Ըլյզօ բէկը՝ այդ ազնիւ համիդիէ սպան ցիրուեցուն տարաւ նրա գիւղասանը, և այժմ բնակվում է Ակսոնքի տանը, որի 40 գոմէշները, 15 զոյգ լծկան եզները, 35 կովերը, 160 ոչխարները և այլն դարձել են յափշտակող սրիկայի սեփականութիւն։ Եւ պէտք է ասել, որ պատմածս մի բացառիկ դէպք չէ։ Դա միայն մի օրինակ է։ Ես կարող էի քառասուն այդպիսի դէպքեր պատմել, որ անձամբ ստուգել եմ, իսկ միւսների թիւր հաշուեցէք լէգիօն։ Թիւրք կառավարութեան նախագիծն էր՝ զրկել հայերին իրենց ստացուածքից և յետոյ Ռուսաստան քշել։ Եթէ այդ ստացուածքը հող էր, տաւար էր, տուն, արմտիք, խոտ և այլն,—յափշտակելը շատ հեշտ էր։ Բանը փոքր ինչ դժուարանում էր, երբոր ստացուածքը դրամի մէջ էր։ Դրամը կարելի է իսկոյն եւեթ ձեռք է ձեռք տալ։ Այս պատճառով դրամ կորզելու միջոցներն անսահման ծայրայեղութեան են հասցրած։ Ամեն մի վալի, ամեն մի կայմակամ և զապթիէ Տաճկաստանի մի ծայրից մինչև միւսը ջանադիր է փող յափշտակել իր ունեւոր հպատակից և իւրաքանչիւր չունեւոր մարդուց։ Ես շատ քաղաքներ տեսայ Օսմանեան պետութեան մէջ՝ Բասէնում, Ալաշկերտում, Քիւրդիստանում և Անատոլում, և միևնոյն սնանկութեան պատմութիւնը պարզ գրերով գրուած գտայ հազարաւոր հայերի աղքատութեան դէպքերի մէջ, հայերի, որոնք դեռ փոքր ինչ առաջ կամ ունեւոր մարդիկ էին և կամ թէ իրօք հարուստներ։ Սամսոնում, օրինակի համար, մի քանի տարի առաջ քաղաքի գրեթէ բոլոր գործերը և հարստութեան մեծ մասը հայոց ձեռին էր։ Այժմ միայն մի ունեւոր հայ է մնացել այդ քաղաքում, և դա է պ. Գուգուգեանը։ Լրտեսութիւն, բանտարկութիւն, զրպարտութիւն դատարանի առջև—ամեն որոգայթ գործ դրուեցաւ այդ թշուառ մարդկանց կողոպտելու և գերփելու համար, այնպէս որ դրանցից շատերն այսօր իրենց ընտանիքով սովից մեռնելու վրայ են։ Այդ վաճառականներից ոմանք այժմ համալի պաշտօն են կատարում Թիֆլիսում, Բաթումում և Պօլսում։ Մի և նոյն տխուր բաները պատահեցին ինձ և Ունիէ քաղաքում, ուր միայն մի ունեւոր հայ է մնացել, իբրև յիշատակ իր հայրենակիցների անցած գնացած բարօրութեան։ Ուրդուում ոչ մի դրամատէր հայ չէ մնացել այլ ևս։ Կերասունում բոլորն էլ սնանկութեան են մատնուած միևնոյն չարամիտ, նախապէս ծոյած կանոնաւոր միջոցներով։ Ամբողջ Տրապիզոնում, ուր հայերը բարգաւաճ կեանք ունէին, անկարելի է գտնել գոնէ մի հայ, որ երկու հազար լիրայից աւելի փողի տէր լինէր։

Հայերին սնանկացնելն ու անտուն անելը այս վերջին տարիների ընթացքում բոլոր թիւրք պաշտօնեաների սիրելի զբաղմունքն էր՝ սկսած Բիթլիսի չարահամբաւ նահանգապետ Թահսին փաշայից մինչև ամենից աղքատ գիւղի յետին զապթիէն։ Զիա փաշան այն աստիճան լրբացել էր, որ մի յատուկ մունետիկ էր շրջեցնում գիւղէ գիւղ, քարոզելով ամենաչքաւոր դասակարգի մարդկանց, որ եթէ սրանք գանգատ յայտնեն հարուստների դէմ, նրանց պահանջը իսկոյն եւեթ կը կատարուի։ Նրա մունետիկները ունկնդրութիւն չգտնելով, իսկապէս կաշառում էին չքաւոր գիւղացիներին և զանազան պատմութիւններ հնարել տալիս իրենց հարուստ դրացիների մասին, որպէս զի արծաթ կորզեն դրանցից։ Իրեն յայտնի նպատակով նա պատռում էր վաւերական պարտամուրհակները, առևտրական հաշիւները Կարա-հիսարում և ուրիշ տեղերում։ Այդ բոլորի անմիջական հետևանքն այն եղաւ, որ առևտուրը բոլորովին դադարեց, վաճառականները մի առ մի սնանկացան և հասարակ ժողովուրդը թշուառութեան մէջ ընկաւ։ Մի քանի շաբաթուայ մէջ տասն վաճառական աղքատացաւ, և Այնոջի օղլու անունով մէկը, որ յիսուն հազար ստերլինի կարողութեան տէր էր, այժմ ուտելու բան չունի։ Ես ունիմ Հայաստանի զանազան կողմերում ապրող երկու հարիւր հայերի ցուցակ, որոնց բանտարկել են միմիայն գերփելու նպատակով, և մի որոշ գումար յափշտակելուց յետոյ՝ արձակել։ Նրանց սպառնացել են փտեցնել գարշահոտ բանտերի զնդաններում, եթէ չվճարեն պահանջուած գումարը։

Ահա իբրև այդ վիճակի վրայ Եւրոպայի ուշադրութիւնը դարձնելու համար էր, որ Մուրադն ու Դամադեանը մի գաղտնի ընկերութիւն կազմեցին և իրենց գոյքը, բաղդը, ազատութիւնը և կարող եմ ասել՝ նոյն իսկ կեանքը զոհ բերին։

Վերոյիշեալ հարստահարութեան ու կեղեքման եղանակի զուգընթաց գործ են տեսնում և վաշխառու դատական ատեանները։ Տաճկաստանում հազիւ կը գտնէք մի դատարան, որ կաշառակեր չլինէր։ Ուրիշ երկիրներում եթէ արդարութիւնը վաճառվում էր, գոնէ օրէնքի և ազնուութեան արտաքին ձևերը պահպանվում էին։ Թիւրքիայում, և մանաւանդ Տաճկա-Հայաստանում ամօթի զգացմունքն անգամ վաղուց արդէն մեռել է, և դատաւորները բացարձակ խորհուրդ են տալիս դատ վարողներին այս ինչքան գումար վճարել, եթէ կամենում են, որ գործը տանեն։ Սակայն ինչ բան կարող է աւելի լաւ պատկերացնել թիւրքերի կաշառակեր բնաւորութիւնը, քան թէ այն ահագին տուրքերը, որ բարեկամ և թշնամի ստիպուած էին վճարել մինչև անգամ այն սակաւաթիւ թիւրք պաշտօնեաներին, որոնք շատ բարձր էին կանգնած իրենց գռեհիկ ընկերներից։ Անենք, օրինակի

*) Դրա հեղինակ միստր Դիլօնից անձամբ լսած ենք, որ նա 25 հատ նամակ է ուղարկել «The Daily Telegr.»-ին Հայաստանից։ Կ'աշխատենք հետզհետէ տալ մեր ընթերցողներին այդ բոլորի թարգմանութիւնը։ Փ. Վ.

մեծ թւով բարեգործական հաստատութիւններ ունենալ քաղաքում, բայց քանի որ քաղաքացիների միջոցները չեն ներում եկամուտները որքան և իցէ բաւարար վիճակի մէջ պահելու, անզգուշութիւն կլինի մի նոր ընկերութիւն ևս հիմնել, որ անկասկած պէտք է մասնակի եկամուտների աննախանձելի դրութեան։»

* *

ԲԱԹՈՒՄԻՑ հեռագրում են «Մշակին» մայիսի 19-ից. «Երեքշաբթի օրը Տրապիզոնի հայոց առաջնորդը հարկադրվեց ինքնասպանութիւն գործելով ազատուել թուրքաց իշխանութեան հալածանքից»։

* *

Երևանից մայիսի 18-ին Թիֆլիզ է եկել Երևանի նահանգապետ գեներալ-լէյտենանտ Ա. Ֆրէզէն։

* *

«Նովոյէ Օբոզր.» լսել է, թէ Ներսիսեան դպրոցի տեսուչ պ. Սազանտելովը հրաժարվում է իր պաշտօնից։ Լսում ենք, որ նորա տեղ հոգաբարձութիւնը նշանակում է Շուշւայ թեմի պաշտօնեայ արած տեսուչ պ. Լևոն Սարգսեանին։

* *

«Կասպի» լրագիրը հաղորդում է, որ ներկայումս նկատվում է ղալմուղ ազգաբնակութեան նուազումը և օր աւուր աճող հոգեկան հիւանդութիւնների տարածումը նոցա մէջ։ Հաշտարխանի նահանգական հիւանդանոցում, օրինակ, հոգեկան հիւանդ ղալմուղների թիւը շատ մեծ է։ Ընդհանրապէս մասնագէտները այն եզրակացութեանն են գալիս, որ մի քանի տարուց յետոյ Հաշտարխանի ղալմուղները բոլորովին կ'անհետանան աշխարհի երեսից և նոյն իսկ նոցա անունը մի առասպել կը լինի։

* *

ՇԱՄԱԽԻ, մայիսի 15.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Տղայոց և օրիորդաց դպրոցների միացման խնդիրը։ Եղբ. Լալայեանները և 17,000 ռուբլու գումար եկեղեցու վրայ ծախսելու ծրագիրը։ Մի համակրելի համախոսական։ Դրամարան և պ. Գէորգ Կաճկաճեանի ձեռքում մնացած 600 ռուբլին։

Մեր «Շամախին և իր ուսումնարանները» (տես «Արձ.» № 14). խորագրով յօդուածի մէջ, խօսելով ընդհանրապէս տեղւոյս հայոց ուսումնարանների նիւթական ողբալի վիճակի մասին, մասնաւորապէս կանգ էինք առել օրիորդաց դպրոցի վրայ։ Մէկ կողմից ցոյց տալով այդ օգտաւէտ հիմնարկութեան յարատեւութեան անհրաժեշտութիւնը, իսկ միւս կողմից դատապարտելով հասարակութեան սառն և անտարբեր վերաբերումը դէպի նա, մենք շեշտել էինք, թէ մօտ ապագայում նորա գոյութեան կարող է վտանգ սպառնալ։ Մեր կասկածանքներն ու երկիւղն իզուր և անտեղի չէին։ Այդ հանգամանքն այնքան զօրաւոր էր, որ շատով իր վրայ գրաւեց և հայր թեմական տեսչի ուշադրութիւնը, որ իր դպրոցներին՝ վերջին այցելութեան ժամանակ, լսելով հոգաբարձութեան արտասանած ուսումնարանի չքաւորութեան մասին, խորհուրդ տուեց երկու բան։ Նախ՝ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ տղայոց դպրոցը նիւթապէս աւելի բարւոք վիճակի մէջ է գտնվում և բաւականաչափ ապահովուած է իր մշտական եկամուտներով, հայր տեսուչն առաջարկեց միացնել երկու ուսումնարանների մասերն ու դրամագլուխը և այդպիսով բոլոր դրամական մասը կենդրոնացնել գանձապահ հոգաբարձուներից մէկի ձեռքում. Երկրորդ՝ որպէս զի հնարաւոր լինի, տարեկան մի զգալի գումար անխնայել և ուսումնարանների ծախսի մօտաւորապէս մի երրորդ մասը կրճատել, հայր տեսուչը հոգաբարձութեան հեռանալ պայմանին առաջարկեց, որ եթէ նորա սկզբունքով դէմ ու հակառակ չեն տղաների և աղջիկների միասին սովորելու գաղափարին, յիշեալ երկու ուսումնարանները միացուին, որով և այժմ գոյութիւն ունեցող տղայոց և օրիորդաց դպրոցների տեղ կը կազմուի մի խառն ուսումնարան և այժմեան 3000 ռուբլու փոխարէն, որ ծախսվում է երկու դպրոցների վրայ, կը ծախսուէր ընդամենը 2000 ռուբլի։

Հոգաբարձութիւնն այդ հարցի առթիւ բաւական երկար ջրի և կրակի միջև տատանուելուց, երկար ու բարակ մտածելուց յետոյ, վերջապէս ընդունեց երկու չարիքից փոքրագոյնը և յայտնեց, որ ինքն սկզբունքով դէմ չէ այդ բանին, եթէ միայն ժողովուրդն էլ իր կողմից համաձայնութիւն կը տայ։ Բայց գործը ձգձգվում է և մինչև օրս էլ մնում է առկախ։ Ուստի դեռ քանի ուշ չէ, և ժամանակ կայ, աւելորդ չենք համարում մենք ևս մեր կողմից այդ խնդրի առթիւ մի քանի խօսք ասել.

Նախ՝ Շամախին Ամերիկա լինելուց դեռ շատ հեռու է և վերջինիս առաջադիմութեան հսկայական քայլերը գուցէ դեռ ևս շատ ժամանակ մեզ համար կը մնան միայն գաղափարի և բարի նախանձի առարկայ։ Երկրորդ՝ ի նկատի ունենալով Շամախու ժողովրդի վարքն ու բարքը, նոցա ընտանեկան կեանքն ու կազմակերպութիւնը, կնոջ՝ ընտանիքում բռնած դիրքը և սոցա նման մի քանի այլ՝ միայն Շամախուն յատուկ՝ առանձնայատկութիւններ, մենք առ ժամանակ ակամայ պէտք է հրաժարուենք այդ փայլուն յոյսերից։ Եթէ շամախեցի կինը մինչև այսօր էլ իր անթափանցելի չարսաւի մէջ փաթաթուած է տանից դուրս գալիս, եթէ նա մինչև այժմ էլ իրաւունք չունի հասարակական տեղերում տղամարդկանց հետ միասին լինել, իր կարծիքներն ու հայեացքներն ազատ յայտնել և քանի դեռ այսպէս կանանց և տղամարդկանց մէջ կայ մի ահագին անջրպետ, չպէտք է նոցան անուշադիր թողնել, առանձնակ անել։

Ժողովրդի դարաւոր սովորութիւնները, նորա հայեացքն ու աշխարհահայեացքութիւնները գրչի մի քմահաճ հարուածով խորտակելն առնուազն մեզ թւում է անհնարին։

Դա մեզ հետաքրքրող հարցի բարոյական կողմն է միայն, դառնանք հիմա դէպի նորա նիւթական կողմը։

Մի բոպէ թոյլ տանք, թէ այդ միացումը կայացաւ։ Ի՞նչ փոփոխութիւն առաջ կը գար այն ժամանակ—ահա թէ ինչ՝ երկու սեռի ուսանողների թիւը կը հասնէր մօտ 250-ի, իսկ այդ քանակութեամբ աշակերտներ չի կարելի տեղաւորել մեր այժմեան երկու ուսումնարաններից և ոչ մէկի շէնութեան մէջ. իսկ եթէ վարձուէր մի փոքր ի շատէ յարմարաւոր շինութիւն, դա ամենաքիչը ծախսումը կարժենար 400 ռուբլի։ Աւելացրէք դրա վրայ և այն ժամանակ բացուելիք զուգընթաց բաժանմունքները և դուք դարձեալ կը ստանաք նոյն ուսուցչական կազմը, նոյն տարեկան ծախսը, ինչ որ է հիմա։

Սակայն օրիորդաց ուսումնարանի վիճակը բարւոքելու և նորան այժմեան նիւթական ճգնաժամից ազատելու համար կան ուրիշ և աւելի ազդու միջոցներ, որոնք մինչև հիմա անուշադրութեան են մատնուած եղել։ Բանը նրանումն է, որ տեղւոյս հին և աւերակ յանուն «Աստուածածնայ» եկեղեցին ունի 5000 ռուբլի դրամագլուխ, որ շահեցվում է Արքունական բանկի Բագուի բաժնում, կարծեմ, երեք տոկոսով։ Ներկայումս քաղաքիս յայտնի հարուստ Լալայեանները, մտադրուելով վերանորոգել այդ եկեղեցին, պատրաստվում են խնդրամատոյց լինել հոգևոր իշխանութեան, որպէս զի իրանց թոյլ տրուի ի միջի այլոց գործ դնել և այդ 5000 ռուբլին։

Որքան էլ որ բարեպաշտական մղումը զգացմունքներից բղխած լինի պ. Լալայեանների այդ բարի ցանկութիւնը, դարձեալ մենք չենք կարող նորա առթիւ մի քանի առարկութիւններ չանել։ Առաջին՝ Շամախում երկրորդ եկեղեցու կարիք ամենևին չէ զգացվում, որովհետև նա, շնորհիւ Կիրքեցի բարեգործ Ներսիսեանների առհմին, ունի մի ընդարձակ և փառաւոր եկեղեցի, որ մինչև անգամ տարւոյ ամենահանդիսաւոր օրերին՝ այն է Զատիկի և Ջրօրհնեաց տօներին՝ կիսով չափ դատարկ է մնում։ Երկրորդ՝ մեզ բոլորովին անհասկանալի է, թէ ինչ օրէնքով և ինչ հիման վրայ մի ու և է անհատ յաւակնում է ձեռնամուխ լինել եկեղեցական փողերին, որ կազմում է ամբողջ ժողովրդի սեփականութիւնը։ Երրորդ՝ եթէ եղբայր Լալայեանները քաղաքիս աւերակ մասում գտնուող քարուքանդ եղած եկեղեցին վերաշինելով, ցանկանում են նորան իրանց համար տոհմական եկեղեցի դարձնել, կամ եթէ նոքա, հին եկեղեցու աւերակների վրայ մի փոքրիկ մատուռ ու մի քանի էլ նորան կից սենեակներ կառուցանելով, նպատակ ունին նորան ուխտատեղի շինել, մենք դորա դէմ ոչինչ չունինք ասելու, քանի որ նոքա մի այդպիսի համեստ շէնքս կառուցանելու համար իրանց ազգականներից մնացած ունին բաւական խոշոր կտակներ։

Շինութեան նախագիծն արդէն հաստատուած է և նախահաշիւը կազմուած, կարծեմ, մօտ 17000 ռուբլու։ Այդպիսի մի փոքրածաւալ շինութեան համար մի այդպիսի մեծագումար նախահաշիւը մեզ չափազանց է թւում։

Այստեղ ակամայ մարդու մէջ միտք է ծագում, թէ արդեօք աւելի ազգօգուտ և պատուաւոր գործ կատարած չէին լինել եղբայր Լալայեանները, եթէ իրանց մտադրած ծրագրից յետ կանգնէին և 17000 ռուբլին յատկացնէին տեղւոյս օրիորդաց չքաւոր ուսումնարանին վերակառուցելով նորան իրանց անունով, իսկ մատուռի վերաշինութեան գործը կը հոգար ժողովուրդը ինքը։ Թող հաւատացած լինին եղբ. Լալայեանները, որ դորանով նոքա իրանց անունը կ'անմահացնէին։

Առիթից օգուտ քաղելով, տեղւոյս հայ հասարակութիւնը, իրան պարագլուխ ունենալով մի քանի խելահաս և պատւաւոր անձինք, աշխատում է մի համախոսական յաջողեցնել, նորան Ծայրագոյն հոգևոր իշխանութեան ներկայացնելու, որպէս զի իրան իրաւունք տրուի վերայիշեալ 5000 ռուբլի եկեղեցապատկան փողի տոկոսը, որ մինչև հիմա աւելանում էր դրամագլխի վրայ, յատկացնելու օրիորդաց ուսումնարանին։ 'Ի սրտէ շնորհաւորում ենք ժողովրդի այդ բարի քայլը և ցանկանում ենք նորան յի ու յի յաջողութիւն։

Մեր ուսումնարանների տարեգրութեան մէջ ոչ սակաւ չարիք է կազմում և երկսեռ դպրոցների դրամարանը։ Նախընթաց տարիներում, երբ դրամարանական գործը որոշ կարգ ու կանոնի տակ դեռ չէր դրուած ու նրա մէջ կատարեալ անիշխանութիւն էր տիրում, նա այլ և այլ բախտախնդիր մարդկանց ձեռքով բաւական մեծ վնասներ կրեց, զրկուելով իր ամենաընտիր և թանկագին գրքերից։ Իսկ այժմս երբ արդէն հոգաբարձութիւնը դրամարանը պաշտօնապէս առել է իր խնամութեան տակ, նորա վրայ ծանր պարտաւորութիւն կայ ժողովելու այլ և այլ անձնաւորութեան մօտ գտնուող դրամարանապատկան գրքերը, որոնց մեծ մասը գտնվում է սոյն Արշակ Թառայեանի մօտ։ Արշակ Թառայեանն այդ գրքերը վերցրել է իր և իր մի բարեկամի դրամարանութեան ժամանակ և մինչև այսօր էլ, չգիտենք ինչ յետին մտքերի ծառայելով, պահում է իր մօտ։

Մեզ մօտ գտնուող մի մասնաւոր ցուցակից երևում է, որ 1892 թուականից դէսը կորել է 81 հայերէն գիրք 182 ռուբլի 45 կոպ. արժողութեամբ և 107 հատ ռուսերէն գիրք 121 ռ. 31 կոպ. արժողութեամբ. ընդամենը՝ 188 հատ գիրք 303 ռ. 76 կոպ. արժողութեամբ։ Մեր առաջ բերած թւերը, կարծեմ, բաւականին համոզիչ են, թէ մեր չարապատիկ խղճուկ դրամարանը մի ժամանակ ինչ անգութ կողոպուտի, ինչ ալանթալանի է ենթարկուած եղել։

Դրամարանի սեփականութիւնից 600 ռուբլի ևս գտնվում է պ. Գէորգ Կաճկաճեանի մօտ։ Յիշեալ պարոնը մի մասնաւոր ժողովում յայտնեց, որ ինքը պատրաստ է այդ փողերը «մէջտեղ բերել», եթէ համոզուած կը լինի, որ նոքա էլ այնպէս անհետ չեն կորչել, ինչպէս կորել են շատ գումարներ, այլ կը գործադրուեն նպատակայարմար կերպով։ Հասարակութիւնն ուզում է այդ 600 ռուբլին յատկացնել ապագայում բացուելիք հասարակական դրամարան-ընթերցարանի օգտին, որ մեզ բոլորովին անհասկանալի է։ Կարծեմ, այստեղ կրկնելն աւելորդ է, որ այդ մասին հոգալն էլ հոգաբարձութեան գործն է։

Արդ՝ ինչպէս տեսնում է ընթերցողը, «հունձք բազում են և մշակք սակաւ»։ Խնդրենք ուրեմն Տէրից, որ մշակներն էլ շուտով երևան։

Արտազ։

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

* * Կ. Պօլսի հայ լրագրների վերջին համարները գրեթէ առանց բացառութեան ամենքն էլ առաջին առաջնորդողներ են նուիրում «դրամօժիտի» խնդրին և այդ խնդիրը հարիւր տեսակ վերնագրի տակ քննութեան նիւթ են շինում։ Զարմանալի, միանգամայն զգալի տպաւորութիւն են անում հոսոսական օրգանները, որոնց խմբագիրները և աշխատակիցները կարծէք ոչ մի հոգս չեն տանում իրենց լրագրների գէթ մի սիւնակը հետաքրքրական նիւթով լցնել։ Ճիշդ է՝ նրանց արգելւում են գրել հայկական խնդրի մասին, բայց ոչ ոք նրանից չէ արգելում ուսումնասիրական յօդուածներ տպագրել Հայաստանի վերաբերմամբ։ Երբեմն երբեմն երևում են թղթակցութիւններ Դիարբէքիրից, Անինից և այն էլ կարծէք թէ, Պօլսի խմբագիրները տպագրում են միայն «վասն դատարկութեան տեղւոյն»։ Կ. Պօլսի մամուլի օրգանների թիւը մի նոր հանդէսով ևս աւելացել է. դա է պ. Արշակ Չօպանեանի «Ծաղիկ» «քաղաքական գրական» փքուն խորագիրը կրող մի բրօշիւր, որ պարբերաբար լոյս է տեսնում երկու շաբաթը մի անգամ։ 5-րդ տետրակը ստացանք այդ «հանդէսի», և բոլոր տետրակներն էլ մէկը միւսից աւելի անբովանդակ։ Վերջին տետրակի մէջ միայն աչքի է ընկնում Գ. Նարեկացու գրուածների մի ուսումնասիրութիւն, որ բաւական մանրամասն է և մօտաւորապէս պատկեր է տալիս մեր ազգային կրօնական տաղասացութեան բանաստեղծի աւելի, ոգեկան բարձր թռիչքի և այն ժամանակների վրայ, որի մէջ ապրել է Նարեկացին։

## ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՈՒՇ, 9 մայիսի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Ժողովրդի դրութիւնը դարձեալ սկսաւ փոխուել—վատանալ։ Երբ եւրոպական Քննիչ Յանձնաժողովը եկաւ Մուշ, քիւրդ տարրը նոյն իսկ գլխն 'ի ձեռին գինոգոլ եղաւ, նուաճուեց. կառավարութիւնը ժամանակաւորապէս չափ դրաւ իւր քաղաքավարի կեղեքմանց ու ձերբակալութեանց, հարկերի և տուրք հաւաքումը դրաւ կերպով գանգաղացաւ։ Ժողովուրդը, թէև թերահաւատ աչօք, այդ բոլորը տեսաւ և փոքր ինչ մխիթարուեց։ Այսօր հիմնուած դառն իրողութիւնների վրայ, նախկին չարագործութիւնների վերականգնումը պիտի խոստովանենք։

Այսօր դեռ երկրորդ օրն է, որ Քննիչ Յանձնաժողովը բացակայ է քաղաքից և կը գտնուի կառավարութիւնից մօտ չորս ժամ հեռու Սասնոյ Շէնիք ու Սեմալ գիւղերի մէջ։ Ի՞նչպիսի կերպարանափոխութիւն տեսա, որ միանգամից չմնաց ժողովրդի կենցաղավարութեան մէջ այդ կարճ միջոցում. այն ժողովրդի, որ կարծես լոկ կ'ապրի ու կ'աշխատի այսօր ու վաղուան դառն մտորմունքներով՝ երբէք յոյս չունենալով

---

համար, Բէքիր փաշայից, որ վերջերս տեղափոխուած է Մ ա ր ա շ ա ն։ Նա մի քանի տարի կայմակամ էր և ընդհանրապէս բարի անուն էր վայելում։ «Ուրեմն Բէքիր փաշան իրաւ մի rara avis է, մի հազուագիւտ թռչուն է, արդար դատաւոր», հարցրի ես եւրոպական բարեկամներիս։ «Այո, այդպէս է», պատասխանից ինձ։ «Ասել է թէ նա խօսք է տալիս կաշառքից, կաշառք չէ՞ սիրում», աւելացրի ես միամտաբար։ «Ո՛հ, ոչ, նա փառաւոր կերպով վերցնում է կաշառ։ Գանգատաւոր և պաշտպանուող սովորած էին մեծ մեծ գումար վճարել նրան, իրաւ է. բայց և այնպէս նա, տարբերելով իւր ընկերներից, արդար էր կտրում դատաստանը։ Կաշառը նա վերցնում էր իւր համար, և վճիռը դնում իւրաքանչիւր կողմի իրական արժէքին համեմատ։ Ո՜, նա շատ վարպետ այր էր»։ Բնական է, որ այսպիսի հանգամանքներում քրիստոնեաները փախչելով փախչին դատական ատեանի առաջ մենամարտի դուրս գալուց։ Արդարութիւնը յայտնապէս մի արգելուած պտուղ է նրանց համար հաւատացեալից վեհապետի թագաւորութեան սահմաններում, և ժամանակի կորուստ կը լինէր, եթէ նրանք հետամուտ լինէին այդ բանին։ Բայց ամենից վատթարը դեռ այդ չէ։ Եթէ քրիստոնեան, արդէն չափից դուրս զրկուած տեսնելով իւր անձը, համբերութիւնը կորցնէ և փորձէ արդարութիւն որոնել, նրան չարաչար կը պատժեն։ Օրինակի համար, 1893 թ. Հասանկալի քիւրդերը ցերեկուայ լուսով ասպատակում են Կարաչօբան գիւղը։ Այդ վայրենի աւազակների թիւը երեք հարիւր էր, ամենքն էլ ձիաւոր և վեհափառ սուլթանի անունն կրող ընտիր զօրքից։ Ամենքն էլ սպառազէն։ Ճշմարտութիւնը պահանջում է ասել, որ նրանք արիւն թափելու դիտաւորութիւն չեն ունենում, թէև այդ անելը շատ հեշտ բան էր նրանց համար, այլ գալիս են գիւղացոց նախիրն ու հօտերը յափշտակելու։ Եւ մինչ նրանք փորձում են այդ միտքն իրագործել, գիւղացիք իրենց սեպհականութիւնը պաշտպանելով, ընդդիմութիւն են ցոյց տալիս։ Այդ միջոցին քիւրդերը հրացան են արձակում և սպանում են չորս մարդ։ Հայերը չորս հոգի կորցնելուց և իրենց ոչխարներից, եզներից, կովերի և այլն մեծ մասից զրկուելուց յետոյ մտածում են, որ եթէ մի պաշտօնական գանգատ յայտնեն իշխանութեան, գէթ մի և է հատուցումն կստանան։ Այդպէս էլ անում են. սակայն հետևանքը իրենց սպասածին հակառակ է դուրս գալիս։ Տանուտէր հայ խեղճն ևեթ ձերբակալվում են և վեց շաբաթ բանտում մնում առանց որևէ քննութեան, թէև նրանք պնդում են, որ անմիջապէս քննութիւն լինի։ Նրանց բանտը, գրեթէ բոլոր ասիական բանտերի նման, ջերմի բոյն էր, և կալանաւորներից երեք հոգի մեռնում են բանտարկութեան հինգ առաջին օրերը։ Չորսը դատապարտվում են տասնուհինգ տարի տաժանակիր աշխատութեան, երեքը՝ երեք տարւոյ աշխատութեան, իսկ մնացածներն արձակվում, մի խոշոր դրամական փրկանք վճարելով, որ պիտի հատուցէին գիւղացիք։ Սակայն բանտից դուրս գալիս նրանք լսում են, որ իրենց բանը վատ կը լինի, եթէ երկրից չհեռանան, և նրանք գաղթում են տարաշխարհ։

Գոմանդուկ գիւղում մի շատ հարուստ հայ էր բնակվում։ Հարուստ ասելով, ուզում եմ իմացնել, թէ նա ունէր բազմաթիւ եզներ, գոմէշներ, ոչխարներ, կովեր և այլն. թէ նրա շտեմարաններն արմտիքով լի էին, մարագները խոտով լի։ Այդ բոլորի մեծ մասը սովորական եղանակով խլեցին նրանից, բայց նա դարձեալ ունէր ցորեն ու խոտ։ Քիւրդերն եկան և կրակ տալով ցորենի պաշարներն և խոտի դէզերին, մոխիր դարձրին ամեն բան։ Անմեղ մարդը գանգատ յայտնեց, և նրան իսկոյն բռնեցին։ Բանտից յետոյ տարան Էրզրում և ամբաստանեցին, թէ դժգոհութիւն է սերմանում գիւղացոց մէջ. սակայն այդ մեղադրանքն այն աստիճան չինծու էր, որ մարդուն շուտով արձակեցին։ Եւ երբեմն ունևոր մարդը վերադարձաւ Էրզրումից Գ ո մ ա ն դ ո ւ կ, ճանապարհին աղքատութիւն խնդրելով։ Այժմ նա մուրացկան է։ Պատմածներս միայն նմուշներ են ամեն օր պատահող դէպքերի, և դեռ շատ հասարակ նմուշներ։

Թիւրք վարչութեան այդ վարմունքը անհետևանք չմնաց։ Հազարաւոր մարդիկ փախչեցին գաղթել Ռուսաստան, և տեղափոխվելով սահմանի վրայ իրենց վերջին դահեկանը, վերջին բարձը, վերջին կարպետ թիւրքին տալ, գնացին ապաւինել իրենց համազգիների մարդասիրութեան։ Ալաշկերտի գաւառը, որ առաջ մի մեծաթիւ հայազգի ժողովուրդ ունէր,—և աշխատաւոր, օրինապահ ու բարեկեցիկ ժողովուրդ,—այժմ գրեթէ դատարկուել է հայերից, և այդ երբեմն բարգաւաճ հայերն այսօր ապրում են Ռուսաստանում Ս. Էջմիածնի նպաստներով և ազգակիցների ողորմութեամբ։ Այն ինչ այդ քրիստոնեաները երկրագործ և հնազանդ հպատակներ էին Օսմանեան պետութեան մէջ։ Նրանք ոչ միայն անվրդով սրտով համբերում էին թիւրքերի վատթար վարմունքին, որ կարող էր ամէն էլ ասես դէպի բացարձակ ապստամբութիւն մղել, այլ դեռ ամենօրեայ, սովորական բան էին համարում այդ վարմունքը։ «Արդեօք չէ՞ս տեսել, որ և է արտաքոյ կարգի անիրաւութեան կամ հալածանքի դէպք, որ պատահած լինէր Խնուսաբերդում», հարցի մի օր Հայաստանի այդ կողմից եկած Գրիգոր անունով մի հայի։ «Ո՛չ, ոչ մի առանձին բան չէ պատահել մեզ մօտ»։ «Ի՞նչպէս թէ չէ», գոչեց Ղազար անունով երկրորդ հայը, որ Գրիգորի ընկերն էր։ «Մի՞թէ թիւրք զինուորները Մելքոնի աղջկան չբռնաբարեցին և յետոյ Էրզրում չտարին»։ «Հ՜հ, այդ դատարկ բան էր. այդպիսի բան ամեն օր էլ պատահում է։ Մտքովս էլ չէր անցնիլ, որ դուք դրանից մասին էք հարցնում», ասաց Գրիգորը, ինքն իրեն արդարացնելով։ Հետևեալ ցուցմունքը շատ բնորոշ է. «Հունձքից յետոյ, 1894 թ., սարերն Բասէնում, քիւրդերն եկան Դօղո գիւղը և քշեցին ութսուն գլուխ եզն ու կով։ Մենք գիտէինք, այսօր էլ գիտենք, թէ ո՞ւր տարուեցաւ այդ նախիրը, բայց լաւ համարեցինք սուս կենալ և ոչ ոքի գանգատ չարինք։ Մօտ տասնութ ամիս անցնելուց յետոյ քիւրդերն եկան ու յափշտակեցին մի քանի հարիւր ոչխար Սերոբ անունով մարդուց, որ Դէլի-Բաբայից էր։ Ամենքն էլ գիտէին, թէ ո՞վքեր էին գողերն և ո՞ւր քշեցին խաշինքը, բայց հատուցումն չուզեցին։ Հինգ ամսից յետոյ քիւրդերն ու թիւրքերը միասին յարձակուեցան Իւզվերան գիւղի վրայ և տարան 180 գլուխ ոչխար, որոնք պատկանում էին այդ գիւղի հայերին։ Դրանից էլ փոքր ինչ առաջ նրանք փախցրել էին Կարապետ Չիլինգիրեանի գիւղացու բոլոր եզները։ Նոյն թիւրքերն ու քիւրդերը եկան յետոյ Հարամաքար գիւղը և թալանեցին գիւղացոց բոլոր ոչխարներն ու այծերը. գիւղացիք այդ բոլորից մի հատն անգամ յետ չստացան»։

Այս ամեն բաները քաջ յայտնի էին տաճկական կառավարութեան. դըրանք չէին կարող պատահել առանց նրա գիտութեան և կամ թէ կցորդութեան։ Ասողներ կան, թէ այդ բոլորը մի էական մասն էր այն նոր ծրագրի, որի նպատակն էր վերակազմել պետութեան զինուորական ուժերը և պատրաստութիւն տալ Ռուսաստանի դէմ։ Այս էր պատճառը, որ ոչ դատաւորներն էին գէթ փոքր ինչ հոգածութիւն և կամ կարեկցում բազմաչարչար ժողովրդին, ոչ էլ նահանգապետները, ոչ էլ սուլթանները։ Անցեալ գարնան Էլփիս գիւղում Մահմուդ աղա Շաքքի անունով մենք հրամայում է գիւղացոց եօթն հատ կով տալ իրեն։ Երեք չորս շաբաթ անցնելուց յետոյ Կըրթերաս գիւղում հարկահանները փորձում են սպանել Մարտիրոս Տէր Գասպարեան հային, որովհետև գիւղացիներից ամենք չէին կարողացել տուրքի պահանջված մասը վճարել։ Հարկահանները հինգ անգամ հրացան են արձակում Մարտիրոսի վրայ, բայց վրիպում են։ Խեղճ մարդը փախուստ տալով դիմում է Հասան-Կալէի կայմակամի պաշտպանութեան և ստանում է նրա մօտ երկու արժանահաւատ վկաներ։ Կայմակամը անմիջապէս առանց փարանելու բանտարկում է Մարտիրոսին և նրա երկու վկաներին, որոնք մինչև այսօր էլ Հասան-Կալէի բանտումն են։

«Ինչո՞ւ ձեր պահապանները հաւար չեն տալիս քիւրդերի կամ թիւրքերի յարձակման ժամանակ», հարցրի ես։ «Անօգուտ բան է, էֆէնդի», պատասխանեց Ղազարը, որ մինչև այժմ իմ հարց ու փորձ արած վկաների մէջ ամենից աւելի վստահելին էր. «ոչ մի թիւրք մաս չի շարժիլ հայերին տէր կանգնելու համար. իսկ հայերին արգելուած է իրենց անձը պաշտպանել։ Եւ մինչ օրէնքը քէչական պատժով արգելում է հայերին մի զէնք կրել, քիւրդերը սպառազինուած են ամենանոր հրացաններով։ Սակայն տեսէք, թէ ինչ պատահեցաւ իմ քեռորդու հետ հաւար տալուն համար։ Եւ այդ բանը պատահեցաւ անցեալ տարի, էֆէնդի։ Իմ քեռորդի Մարտիրոսը սպանուեցաւ մի քիւրդի ձեռքով հէնց այդ բանի համար, ինչ որ պէտք էր անել քո ասելով։ Մարտիրոսը գիւղի պահապանն էր։ Մի գիշեր քիւրդերն եկան և սկսան անել տան շրջել տեսնելու համար, թէ ինչ բան կարելի է գողանալ։ Վերջապէս նրանք որոշեցին ներս մտնել Պետօի որդի Առաքելի տունը, որպէս զի նրա կնոջն անպատուեն։ Մարտիրոսը հաւար կանչեց, և քիւրդերը նոյն բոպէին նրա գլուխը ջախջախեցին։ Ո՞ր պահապանն սիրտ կըտայ այդ վարմունքը»։

Տաճկաստանի հայ քրիստոնեաները, քիւրդերի և թիւրքերի ձեռքից այդպիսի հալածանքներ կրելով,—որոնք անշուշտ դիմադրութեան և ապստամբութեան դրօշակ բարձրացնել կտային ոչ այնքան խաղաղասէր ժողովրդին,—սկսան արագ արագ անհետանալ։ Հողերն անհերկ և անմշակ մնացին, հունձքը փտեց դաշտերում, թիւրքի ձիերը գիրացան ցորենի ու գարու արտերի վրայ, և այդ բոլորից առաջ եկող սովին զոհ գնացին անթիւ քրիստոնեայ մարդիկ, կանայք և մանկունք։ Հազարաւոր հայեր Ռուսաստան գաղթեցին։ Երևանի նահանգում և Կարսի զինուորական շրջանում աւելի քան 15,000 հազար Տաճկա-Հայաստանից փախած հայեր կան, որոնք բառիս բուն առմամբ ողորմութեամբ են հաց ճարում, և Թիւրքական կառավարութիւնն արգելում է նրանց վերադառնալ։ Եթէ Սասունի գիւղացիք իրենց դաշտաբնակ համազգիներից տարբեր ոգի չունենային, հայերը, իբրև ազգութիւն, բնաջինջ կը լինէին աշխարհիս երեսից, մինչև որ քրիստոնեայ պետութիւններից գէթ մէկը պաշտօնապէս տեղեկութիւն ստանար այդ մասին։

Փ. Վ.

իւր մօտիկ ապագայի վրայ անգամ։

Թիւրք ամբոխը արդէն վերին աստիճան գրգռեալ վիճակի մէջ է։ Սոֆթաներն ու ֆախիները, որոնք հարազատ ու իսկական աշակերտ են յայտնի շէյխ Համի-Դոյլիքի, զինւորուած խմբերով և «մահ գեաւուրներին» բարձրագոչ աղաղակներով այսօր կը շրջեն փողոցէ փողոց և մեծ ահ ու զարզանդի տակ կը թողեն առանց այն էլ երկիւղով թմրեալ քաղաքի ազգաբնակութիւնը։

Կառավարութիւնը՝ փոխանակ պատժելու և զսպելու այդ տարրը, կարծես լուռ ձեռով կուզէ շատանալ ու այնպէս միամտացնել ժողովուրդը։ Նա փոխանակ իւրաքանչիւր թաղերի ու փողոցների մէջ զօրաց վաշտեր կանգնացնելու կամ շրջեցնելու, փոխանակ ամեն մի այդպիսի յանդուգն մոլեռանդները պատժելու, այսօր կը բաւականանայ միայն ոստիկանաց մի փոքրիկ խումբ շրջեցնել թաղերու մէջ։ Մի խումբ՝ որի բարքն ու վարքը, մատուցած ծառայութիւն ասա արձանագրելու համար իսկապէս ծանր կը թուի։

Ժողովուրդը իւր ինչ անելը չգիտէ։ Նա անգլուխ, անղեկավար է այժմ։

Այսօր ոչ միայն քաղաք, այլ և ամբողջ թեմ իւր շրջակայ գաւառներով հանդերձ անհովիւ, անառաջնորդ է։ Ուրեմն էլ ով կամ որդ դիմէ իւր երերեալ վիճակն ապահովելու, իւր վտանգուած դրութիւնը վերականգնելու, խաղաղելու համար։

Ժողովուրդը, պէտք է ասած, նախազգալով այն սոսկալի վտանգը, որ իւր համար կը դարանուի այսօր ֆանատիկոս մուսուլմանների կողմից, ինքն իրան կազմեց մի գաղտնի թաղական խորհրդոյ նիստ և՝ մի անվեհեր սուրհանդակի միջոցաւ, նորա արձանագրութիւնն ու վճիռը առաքեց Սասուն եւրոպական Քննիչ Յանձնաժողովին։

Միևնոյն տխրաբեր լուրերն ու տեղեկութիւններ այսօր անընդհատ շրջակայ գաւառներից, գիւղերից և քաղաքներից ես կը հասնին։

Հարկերի և տրոց հաւաքումը, կարելի է ասել, դեռ ոչ մի ժամանակ այսչափ խիստ ու անողոք չէր գանձուած, որքան այդ կը կատարուի ներկայումս։ Հայ քաղաքացին ու գիւղացին այսօր կը պարտի ամեն ինչ՝ տան իրեղէններ, կահ-կարասիք, ոչխար ու այլ անասուն ի վաճառ հանել և գոհացում տալ կառավարութեան ներկայացուցիչ զապթիաներին, որոնց համար խիղճ բառած բան կարծես սկզբանէ անտի գոյութիւն ունեցած չէ և չպիտի ունենայ ևս։ Ոչխարաց տուրք, որ առանց այն էլ անտանելի էր իւր ծանրութեամբ, պաշտօնական մի ծանուցագրից կը տեղեկանամք որ այժմ աւելացած է՝ փոխանակ պակասելու ու թեթևանալու։

Այս այսպէս լինելուց ու կատարուելուց յետոյ այսօր ամենահաստատ լուր ունիմք, որ շուտով պիտի սկսուի եկող երկու տարիների ամբողջ տուրքերն ևս ի միասին հաւաքել։ Եւ այդ պիտի կատարուի նոյն իսկ այս տարուայ ընթացքում։ Այն ժամանակ ուրեմն աւելի հեշտ կը լինի դատել ու երևակայել այժմեանից ֆիզիքապէս ու նիւթապէս ճընշուած ու ընկճուած եղկելի ժողովրդի դրութիւնը, նորա վերջնական անկումն ու քայքայումն. . .

Ռէհվի-Քուվի։

—

Կ. Պօլսի թերթերից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները.

«ՍՍՈՑ Կաթողիկոսին ընտրութեան գործադիր տեսուչ Տէր. Գրիգորիս արքեպիսկոպոս Յովհաննէսեան Աստանա ժամանելուն, այցելութիւն տուեր է նահանգին կուսակալին և յանձներ է իր յանձնարարագիրը։

Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս արդէն սկսած է ընտրութեան նախապատրաստական գործողութեանց։

ՎԱՆԷՆ կը գրեն, թէ վերջերս տեղացած անձրևներ բաւական նպաստեր են հունձքերուն։

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ.—Հրաւէր նորատեսակ խաչակրութեան. Ֆրանսիայում մեծ աղմուկ է հանել եպիսկոպոս Դոմինիկեան քահանայ Մօնսաբրի անսպասելի խաչակրութեան հրաւէրը։ Կլէրմօն-Ֆէրրանում տօնվում էր խաչակրաց արշաւանքի 800 ամեակը և այդտեղ հայր Մօնսաբրը նոր խաչակրութեան հրաւէր կարդաց։ Նա յայտնեց որ Ֆրանսիան պիտի նոր խաչակրաց արշաւանք սկսի անաստուածների, հանրապետականների, ֆրանկմասոնների դէմ, որոնք ճնշում են Ֆրանսիային և որտեղից ձայնով դիմելով ներկայ եղող երկու կարդինալներին և 40 եպիսկոպոսներին ասաց. «Դուք պէտք է դիմադրութեան առաջին օրինակը ցոյց տաք, դուք էք հաւատոյ զինուորներ, դուք պէտք է ձեր թագերը զինուորական սաղաւարտների փոխէք և գաւազանի փոխարէն սուր վերցնէք։ Ձեր չորս կողմը կը հաւաքուեն եկեղեցւոյ պաշտօնեայք և ժողովուրդը։ Բարձրացրէք խաչի դրօշակը և յառաջ։ Առաջնորդեցէք մեզ։ «Թող Աստուծոյ կամքը լինի»։ Տաճարը լիքը ժողովուրդը ոգևորուած ծափահարում էր, իսկ կարդինալները և եպիսկոպոսները երկիւղից շփոթուել էին։

—

ՃԱՓՈՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ.—Այնչափ էլ շուտ չէ վճռվում ճափոնական խնդիրը, որքան թւում էր սկզբից։ Ձանգհայից հեռագրում են, թէ Չինաստանը մտադիր չէ վճարել ճափոնիային լրացուցիչ տուգանք Լիօտանգի թերակղզու փոխարէն. ուրեմն հաւանական է որ ճափոնիան յետ կը կանգնի իր խոստումից ձեռք քաշել Լիօտանգից։ Բացի դրանից Գերմանիայի դիրքն այդ խնդրում այժմ ուրիշ կերպարանք է ստանում։ Հաւասի գործակալութեան մի հեռագիրը հաղորդում է, թէ Բերլինի կառավարութիւնը համերաշխ չէ Ֆրանսիական և Ռուսաց կառավարութեան հետ, որ ճափոնիայից պահանջեն արգելք չլինել եւրոպական առեւտրին չինական ծովերի վրայ։ Գերմանիան գտնում է որ ռուսներն իրաւունք ունեին մի շատաղ նաւահանգիստ ունենալ Խաղաղ ովկիանոսում, իսկ ճափոնիան ինքը գիտէ իր գործը։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Մայիսի 20-ից.

ԲԵՐԼԻՆ.—«Հիւս. Գերմ. Լրագ» համոզուած է որ Ֆրանսիան ու Ռուսաստանը համերաշխութեամբ են գործում չինական փոխառութեան խնդրում և հաստատ են համարում, որ Ռոտշիլդն այդ գործի մէջ կարգադրիչի դեր չի ստանալ։

ԲԵԼԳՐԱԴ.—Սիմիչը պնդում էր թագաւորի առաջ, թէ անհրաժեշտ է շատ շուտով սահմանադրական կառավարութիւն և արմատական կաբինէտ կազմակերպել։

ԼՈՆԴՈՆ.—Ձանգհայից հաղորդում են, թէ ճափոնացիք նաւերից իջան Տայպօֆում և տեղական իշխանութեանց յայտնեցին, թէ մտադիր են Ֆորմօզա մտնել և տիրապետել։

Սեր Էդուարդ Գրէյը առեւտրական պալատի բանկետի ժամանակ ճառ արտասանեց և յայտնեց թէ նախարարութեան հրաժարական տալու մասին լուրերը անհիմն են։ Բանկետին ներկայ եղող ճափոնական դեսպանը յայտնեց որ ճափոնիան միայն ցանկանում է արտաքին վաճառականութեան համար ազատ ճանապարհ բանալ։ Դեսպանը շնորհակալութիւն է յայտնում Անգլիայի անկեղծ բարեկամական տրամադրութեան մասին։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Մայիսի 19-ից.

Վեքսէլի կուրս 3 ամսով։

| | |
|---|---|
| Լօնդոնի վրայ 10 ֆ. ստ. | 93,85 |
| Բերլինի վրայ 100 մարկ | 45,30 |
| Փարիզի վրայ 100 ֆր. | 36,67⁵/₈ |
| Նոր կարած պօլուիմպերիալներ | 7,39 գն. 7.41 վաճ. |

| | |
|---|---|
| Բօրսայի զեղջը | 5-ից 7% |
| 4% Պետական արժեթղթ. | 99⁵/₈ |
| 5% ոսկ. արժեթ. 1894 թ. | 164 |
| 5% Առաջին ներքին փոխ. խաղատոմս 1864 թ. | 237 |
| 5% Երկր. ներքին փոխառ. խաղատոմս 1866 թ. | 224½ |
| 5% Ազնուակ. հող. բանկի գրաւական. խաղատոմս. | 207 |
| 5% Պետական երկաթուղու արժեթուղթ | 101³/₄ |
| 4% Ներքին փոխ. I սեր. | 99¼ |
| " " " II " | 99¼ |
| " " " III " | 99¼ |
| " " " IV " | 99¼ |
| 4½% փոխ. 1893 թուի. | 101⁵/₈ |
| » փոխ, 1 հրատարակ. | 101⁵/₈ |
| » փոխ. 2 հրատարակ. | 101⁵/₈ |
| 4½% Գրաւակ. արժեթղթ. ազն. հողային բանկի. | 101½ |
| 4½% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր. | 101⁵/₈ |
| 5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ. | 101¼ |
| " Մոսկուայի | 101¼ |
| 5½% Օդեսայի | 100¼ |
| 5% Թիֆլիզի | 99⁵/₈ |
| 5% Գրաւակ. արժեթ. հող. բանկերի Խարկովի | 100³/₈ |
| " Պօլտավայի | 100 |
| " Տուլայի | 100 |
| " Կիեվի | 100 |
| " Մոսկուայի | 100 |
| " Բեսսարաբիայի | 100 |
| " Ներքին Սամարայի | 100 |
| " Դօնսկոյ | 100 |
| " Վիլենսկի | 100 |
| 6% և 5% Թիֆլիզի | 101 և 99½ գն. |
| " Քութայիսի. | 101 և 99½ գն. |

## ԶԱՆԱԶԱՆ

ԻՏԱԼԻՈՅ ԹԱԳՈՒՀԻՆ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԱՆՔՈՒՄ

—

Մոնիդէօn-ի մէջ հետեւեալ մանրամասնութիւնները կը գտնենք այդ այցելութեան մասին.

«Իտալիոյ թագուհին, որ անցեալ շաբթու Վենետիկ կը գտնուէր Գեղարուեստական ցուցահանդէսին բացման առթիւ, իր սովորութեան համեմատ այցելեր է Մխիթարեանց վանքը, Ս. Ղազարի կըղզին։

«Թագուհին ընդունուեր է, պատուոյ սանդուղին ոտքը, Ս. Ղազարի աբբահայր Տ. Իգնատիոս Կիւրեղեան արքեպիսկոպոսէն, որ անոր ձեռքը համբուրեր է։ Ն. Վեհափառութիւնը, որուն կը ընկերանար իր հարսը, Ճենովայի դքսուհին, առաջնորդուեր է մեծ և շքեղ սրահը, ուր կը գտնուի գրատունը և թանգարանը։ Հոն աւանդական վարդի-անուշը հարմցուեր է իրեն։

«Ներկայ գտնուող հայրերուն հետ սիրալիրաբար տեսակցելէ յետոյ, Ն. Վեհափառութիւնը ուզեր է անգամ մըն ալ այցելել վանքի յարակից մասերը։

«Պարտէզին մէջ, մէկ քանի ծաղկեփունջեր մատուցուեր են իրեն։

«Դրատուն դառնալով, Մարկրիտա թագուհին իրեն ներկայացնել տուեր է Մխիթարեանց Մուրատ-Ռափայէլեան վարժարանին աշակերտները, և ամենուն մէկ մէկ շնորհալի խօսք ուղղեր է։

«Ն. Վեհափառութիւնը, մէկ ժամէն աւելի Ս. Ղազար մնալէ ետքը, մեկներ է՝ իր այցելութեամբ հմայուած թողլով հայրերը որպէս միշտ։

«Այդ միջոցին Ս. Ղազարու կղզին շրջակայքը պաշարուած էր բազմաթիւ կոնտոլաներէ, որոնց մէջ երգիչներ ճըշմարիտ նուագահանդէս մը կուտային։ Այս բոլոր կոնտոլաները ուղեկցեր են թագուհին մինչև Ս. Մարկոսի հրապարակը, ուր Ն. Վեհափառութիւնը ցամաք ելեր է արքայական պալատը դառնալու համար։»

Խմբագիր հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9 -10 ժ. աչքի, ներքին և ներարգային հ.

Կին-բժիշկ Ա. Ի. ՍՕՐՕՏԿԻՆԱ—ՉՁԵՐԲԻՆԻՆԱ—10—11 ժ. կանանց և ներքին հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՒԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԿԱՐԱԳԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ի. Փ, ՊՐՕՏԱՍԵՒԻՉ—5—6 ժ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների ներքին և մորթի հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խուզարկողական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումն ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։

Բժշկական ընդունարան

ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ.

ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիեւսկի փողոց № 14.

—

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԷԼԵՔՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական միջոցներ։

—

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը { կիներ և երեխաներ

1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան { տղամարդիկ

—

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ-մասսաժ անող կին և մասաժիստ պարոն։

## Անդրկովկասեան երկաթուղի

—

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թէֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա-մարդատար գնացքը Թիֆլիզից Դանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Դանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Դանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտեան 7 ժ. 35 րոպէին։

—

ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

Վլադ. պատերազմական ճանապարհով.

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետեւեալ օրը ժամից 7-ը մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետեւեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետեւեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԻՆ-ԲԺԻՇԿ

Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԻՆԱ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր առաւօտեան 11½ ժամից մինչև 1-ը և երեկոյեան 6—7-ը։ Գօլօվինսկի Պրօսպեկտ տուն Արևյանի։

«Կենդրոնական գրավաճառանոցում»

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

մեծադիր, շքեղ՝ պատկերազարդ հրատարակութիւն 1860 թ. տպած Վենետիկ. փառաջկազմ. գինն է 25 ռ.

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ պատիւ ունի յայտնել, որ այսօր, կիւրակէ առաւօտեան ժամը 12-ին Ներսիսեան դպրոցում կատարուելու է նորոգ հանգուցեալ՝ դպրոցի հոգաբարձու

Պ. Գ. ՄԵԼԻՔ-ԿԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ

հոգեհանգիստը։ (№ 210) 1—1

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՕՍՍԻԱ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 22,000,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում.

Ընկերութիւնն ընդունում է

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1894 թուի յունվարի 1-ին «ՌՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ

առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների եւ բանուորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները, դիվիդէնտի փոխարէն։

ՀՐԴԵՀՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շէնութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն)։

ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ցամաքային, ջրային և ծովային. ապահովագրութիւն նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան Վարչութեան մէջ, որ գտնւում է ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեւսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրութեան տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։ (50—23)

ԹԻՖԼԻԶՈՒՄ ԱՊՐԻԼԻ 15-ԻՑ ԲԱՑՈՒԱԾ Է

ԱՄԵՆԸՆԴԱՐՁԱԿ ԵՒ ԸՆՏԻՐ ՀԻՒՐԱՆՈՑ

ՕՐԻԱՆՏ

(Hôtel d'Orient)

Հիւրանոցը գտնվում է քաղաքի կենդրոնում, Գօլովինսկի պրօսպէկտի վրայ, պալատի հանդէպ, տուն Ն. Միրիմանեանի, որ առաջ տեղաւորուած էին գաւառապետական առեանները։ Գեղեցիկ, բոլորովին նոր ՆՈՄԵՐՆԵՐ մէկ ռուբլուց մինչեւ տասնեւհինգ ռուբլի օրական. ամսով ըստ համաձայնութեան։

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՌԵՍՏՈՐԱՆ

Դահլիճ հասարակական հացկերոյթի համար։ Առանձին կաբինէտներ։ Ֆրանսիական, ռուսական և տեղական խոհանոց։

ՃԱՇԵՐ, ԸՆԹՐԻՔՆԵՐ և ՆԱԽԱՃԱՇԻԿՆԵՐ ի յատուկ պատուէրով։

Տեղական. արտասահմանի եւ ռուսաց գինիներ։

(30—4) Հիւրանոցի տէր՝ Ա. ՖՐԱՆՍԻՒՐՕ։

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Օ. ՉԻԲԵՐՏԻ

(№ 7, Դվօրցովայա փողոց, տ. Սարաջեւի, № 7)

ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԻՍԿԱԿԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ԶԱՆԱԶԱՆ ԻՐԵՂԷՆՆԵՐ

ԱԼԲՕՄՆԵՐ ԻՐԵՂԷՆՆԵՐ ՓՂՈՍԿՐԻՑ, ԿԱՇԻՑ ԵՒ ՄԵԼԽԻՕՐԻՑ

(150—128)

Յունիսի սկզբներին լոյս կը տեսնի

ԲԱԳՐԱՏ ԱՅՎԱԶԵԱՆՑԻ

I

ՏԱՆՋԱՆՔԻ ԲՈՎԻՑ

վէպ, իսկ յետոյ

II

ԱՆՑՔԻ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

պատմական վէպ 11-րդ դարու։

Երկու գրքի բաժանորդագինն է մէկ ռուբլի, լոյս տեսնելուց յետոյ գինը կը բարձրանայ։ Հիմք՝ Тифлисъ, Баграту Айвазянцу, Эчміадзинская улица № 20. կամ «Կենտր. գրավաճառանոց»։

Տպագրվում է և լոյս կտեսնի, Մայիսի վերջերին

„ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ“

ԳՐԻԳՈՐԻՈՍ ԵՐԶՆԿԵԱՆՑԻ

Բաժանորդները բաժանորդագրութիւնները վերադարձնելու են մինչև ամսոյս 25-ը։

5—4

Дозволено цензурою, Тифлисъ 20-го Мая, 1895 года. Տպարան Մնացական Մարտիրոսեանցի և Ընկ. Типографія М. Мартиросянца, и К°. На Михайловской ул., № 81.